



Ի՞նչ է Ազգային պլատֆորմը



Աստղերի կյանքն ու մահը



Պտտահողմեր



2010 թ. Աշխարհի առաջնությունից

15

ISSN 1829-149X



1 0 0 2 7



9 771829 149003

ուլ իրազեկված է, նա տաշտոանված է

արտակարգ թերթ

N 27-28 (348-349) 23.7.2010 - 2.9.2010 www.emergency.am

ճապոնական նոր հրշեջ-մեքենաներ՝ Հայաստանին

Հուլիսի 21-ին Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանն ու ԱԻ նախարար Արմեն Երիցյանն այցելեցին ԱԻՆ 308 Հատուկ փրկարարական ջոկատ՝ դիտելու ժամանակավորապես այնտեղ տեղակայված 28 հրշեջ-մեքենաները, որոնք Հայաստանի Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությանն է տրամադրել ճապոնիայի կառավարությունը:

ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության եւ ճապոնիայի կառավարության համագործակցությունն սկսվել է 2005 թվականից: Հաշվի առնելով հատուկ հրշեջ-մեքենաների պահանջարկը՝ Հայաստանի փրկարար ծառայությունը դեռեւս 4 տարի առաջ կազմեց տեխնիկական աջակցության ցուցաբերման առաջարկ, որը ՀՀ կառավարությունը ներկայացրեց ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությանը: Դրանից հետո ճապոնացի մասնագետներն այցելեցին Հայաստան, փրկարար ծառայության մասնագետների հետ համատեղ ուսումնասիրեցին Հայաստանի հրշեջ մասերի աշխատանքն ու տեխնիկան:

- Միասին ուսումնասիրեցին բոլոր հրշեջ մասերի մեքենաները, վերլուծեցին դրանց կողմից սարհների ընթացումը կատարված հրդեհաչիջումները,- ասում է ԱԻՆ 308 փրկարար ուժերի վարչության պետի տեղակալ Պավել Գյոզալյանը:

2009 թվականի փետրվարի 10-ին Հայաստանի եւ ճապոնիայի կառավարությունների միջեւ երեւանի հրշեջ մա-



սերին 28 մեքենա տրամադրելու վերաբերյալ համաձայնագիր ստորագրվեց:

28 հրշեջ-մեքենաներն արդեն Հայաստանում են: Դրանց ընդհանուր արժողությունը 8 մլն դոլար է: Բոլորովին նոր են: Դրանցից 2-ը 30 մետր բարձրության ավտոսանդուղքներ են, 5-ը՝ 10 տոննա ջրատարողությամբ եւ 1000 լիտր փրկարիչեղուկի տարողությամբ հրշեջ-ավտոմեքենաներ են ու նախատեսված են բարդ հրդեհների եւ ջրի պակասության պարագայում հրդեհաչիջում իրականացնելու համար (յուրաքանչյուրը հավասար է 5 սովետական «ՋԻԼ» մեքենայի): Մեքենաներից 19-ը 3500

լիտր ջրատարողությամբ եւ 350 լիտր փրկարիչեղուկի տարողությամբ հրշեջ-ավտոմեքենաներ են, որոնք կծառայեն որպես հիմնական հրդեհաչիջում իրականացնող մեքենաներ: Նաեւ կա 1000 լիտր ջրատարողություն ունեցող արագ արձագանքման երկու հրշեջ-ավտոմեքենա, որոնք նախատեսված են Կոնդի, Նորագյուղի եւ դժվարանցանելի փողոցների ունեցող այլ թաղամասերի, ինչպես նաեւ խցանումների ժամանակ արագ տեղ հասնելու համար: Բոլոր ավտոմեքենաները հագեցված են հրդեհաչիջման եւ հրդեհի ժամանակ փրկարարական աշխատանքներ իրականացնելու համար նախատեսված գույքով:

Ճապոնացի գործընկերներն ու ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության մասնագետները միասին նաեւ որոշել են, թե ինչպես են տեղաբաշխելու մեքենաները:

- Երեւանի բոլոր հրշեջ մասերը, բացառությամբ 2-ի, կսահման մեքենաներ: 30 մետրանոց ավտոսանդուղքներից մեկը կլինի 8-րդ հրշեջ մասում՝ Սախարովի 2 հասցում գտնվող, մյուսը՝ Դավթաբենում գտնվող հասուկ հրշեջ ջոկատում,- ասում է Պավել Գյոզալյանը:

Մեքենաների հետ Հայաստան են եկել նաեւ ճապոնացի մասնագետները, ովքեր 135 հրշեջ-փրկարարի ուսուցանում են, թե ինչպես է պետք աշխատել նոր մեքենաներով, ինչ գործիքներ ու հնարավորություններ ունի այն:

Օգոստոսի 11-ին տեղի կունենա մեքենաների պաշտոնական հանձնումը, որից հետո դրանք կանցնեն շահագործման:

Սերգեյ Ազարյանը՝ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն



Հուլիսի 21-ին Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը ներկայացրեց ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության նոր տնօրենին՝ գնդապետ Սերգեյ Ազարյանին:

- Ես հանրապետության նախագահի եւ վարչապետի հետ խոսել եմ նոր նշանակման մասին, եւ նրանք իրենց գոհունակությունն են հայտնել այդ կապակցությամբ,- նշեց նախարար Արմեն Երիցյանը,- Սերգեյ Ազարյանն իսկական սպա է, ու համոզված եմ, որ միասին հաջողությամբ կիրականացնենք նախատեսված բոլոր բարեփոխումները:

- Ես շնորհակալ եմ այս նշանակման համար, - ասաց Սերգեյ Ազարյանը, - դա նշանակում է, որ ինձ վստահում եք: Մենք լավ կոլեկտիվ ունենք, շատ զործ է կատարվել, սակայն անելիքները նույնպես շատ են: Մենք ամեն ինչ անելու ենք, որ արդարացնենք սպասելիքները:

1985 թ. նշանակվել է Հայկական ԽՍՀ Քաղաքաշտպանության շտաբի 302 դասընթացների դասախոսի պաշտոնին: 1986-1988 թթ. ընդունվել է ավարտել է Մոսկվայի Կ. Կուլբիշևի անվան ռազմա-ինժեներական ակադեմիան: 1988 թ. նշանակվել է Երեւանի Շահունյանի շրջանի գործադիր կոմիտեի քաղաքաշտպանության պետի տեղակալի - շտաբի պետի պաշտոնին: 1989 թ. նշանակվել է Հայկական ԽՍՀ ՔՊ Հանրապետական շտաբի հակաքիմիական եւ հակաճառագայթային բաժնի պետի պաշտոնին: 1990 թ. նշանակվել է Երեւանի ՔՊ պետի տեղակալի - շտաբի պետի պաշտոնին: 1992 թ. զբաղեցրել է ՔՊ Հանրապետական շտաբի պետի առաջին տեղակալի պաշտոնը: 1993 թ. ՀՀ կառավարության որոշմամբ նշանակվել է ՀՀ Քաղաքացիական Պաշտպանության պետի տեղակալի - Հանրապետական շտաբի պետի պաշտոնին: 1993-1997 թթ.՝ ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության ձեռնարկման օրվանից զբաղեցրել է ԱԻ պետականության պետի - նախարարի տեղակալի - ՀՀ Քաղաքացիական պաշտպանության Հանրապետական շտաբի պետի պաշտոնը: 1993 թ. շնորհվել է «գնդապետ» զինվորական կոչումը: 1998-1999 թթ. զբաղեցրել է ՀՀ կառավարությանն առընթեր ԱԻՎ պետի խորհրդակցական պաշտոնը: 1999-2000 թթ.՝ ՀՀ ԱԻՎ բնակչության եւ տարածքների պաշտպանության վարչության պետի պաշտոնը: 2000-2001 թթ.՝ ԱԻՎ գործերի եւ փրկարարական ուժերի վարչության պետի պաշտոնը: 2001-2005 թթ.՝ ՀՀ ԱԻՎ Արտակարգ իրավիճակների կանխման եւ հետեւանքների վերացման վարչության պետի պաշտոնին: 2005-2009 թթ. եղել է ՀՓԾ բնակչության եւ տարածքների պաշտպանության վարչության պետ: 2009 թ. ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի N 70-Ն հրամանով նշանակվել է ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի տեղակալի պաշտոնին: 2010 թ. հուլիսի 21 -ից՝ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն:

Գնդապետ Սերգեյ ՆԻԿՈԼԱՅԻ ԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1955 թվականի հուլիսի 31-ին Կիրովաբադ քաղաքում:

1973 -1977 թթ. ընդունվել է ավարտել է Սարատովի բարձրագույն զինվորական ինժեներական, քիմիական պաշտպանության ուսումնարանը եւ նույն տարում անցել զինվորական ծառայության ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության համակարգում:

1977 թ. նշանակվել է Կրասնային ԽՍՀ ՔՊ Հանրապետական շտաբի 983-րդ հաշվարկա-անալիտիկ խմբի պետ:

1979 թ. տեղափոխվել է Հայկական ԽՍՀ եւ նշանակվել 312-րդ առանձին մեքենայացված գնդի հակաքիմիական եւ հակաճառագայթային պաշտպանության դասակի հրամանատար:

1981 թ. նշանակվել է Լենինականի ՔՊ շտաբի ավագ սպա:

«Էլիտ գրուպ».
կյանքի նոր որակ

Սեյսմակայուն
Էլիտար
Հինարարության
առաջատարը
տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am;
URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում: Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր: «Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում: «Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



Հայաստանի փրկարար ծառայությունը գանգահարեք 1-01, 1-12

Պայթյուն եւ հրդեհ

Հուլիսի 15-ին, ժամը 09.46-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Կուրդինյան 27/3 հասցեում տեղի է ունեցել պայթյուն՝ հետագա հրդեհի բռնկումով:

Պայթյունի պատճառը, փրկարարական ուժերի վարչության հրդեհաշիջման բաժնի օպերատիվ եւ հատուկ փրկարարական ջոկատի հերթապահ խմբերը:

Պայթյունի տեղի վրա պահվել է 33 ազգային անվտանգության, «1-02», «1-03» եւ «1-04» ծառայությունների եւ էլգանցի հերթապահները:

Իրականացվել է շենքի բնակիչների տարահանում:

Պայթյունի պայթյուն է գտնվել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարը:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 10.18-ին, մարվել՝ 10.26-ին:

Պայթյունի եւ հետագա հրդեհի պատճառները ճշտվում են:

Ամբողջությամբ այրվել է 3. Կարապետյանին պատկանող բնակարանն իր գույքով՝ 100 քմ ընդհանուր մակերեսով, հարակից 6-րդ բնակարանի պատշգամբը՝ 3 քմ մակերեսով եւ վնասվել են պատուհանները:

Հրդեհ-փրկարարները հրդեհի վայրում

հայտնաբերել են 70-ամյա Հովհաննես Կարապետյանի դին, որը հանձնվել է ոստիկանության աշխատակիցներին:

Պայթյուն բռնկարարում

Հուլիսի 15-ին, ժամը 21.30-ին ահազանգ է ստացվել, որ Մասիս-Արտաշատ ավտոճանապարհին գտնվող գազալցակայանում տեղի է ունեցել ավտոմեքենայի գազի բալոնի պայթյուն:

Պայթյունի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Տեղում պարզվել է, որ Մասիս-Մարմարաշեն ավտոճանապարհի 1-ին կիլոմետրում գտնվող «Արսեն Թեւանի» ՍՊԸ-ին պատկանող գազալցակայանում տեղի է ունեցել «ՊԱՁ-53» մակնիշի 27 LO 714 պետհամարանիշի բեռնատար ավտոմեքենայի բարձր ճնշման գազի բալոնի պայթյուն:

Պայթյունի հետեւանքով մեքենայի վարորդը՝ Մարմարաշեն գյուղի բնակիչ, 30-ամյա Արթուր Գալստյանը, ծախս ձեռքի անդամահատումով տեղափոխվել է Մասիսի հիվանդանոց, այնուհետեւ՝ Երեւանի Հերացու անվան թիվ 1 համալսարանական հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

Պայթյունի մասին տեղեկացվել է ՀՀ ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը:

Գազի արտահոսք

Հուլիսի 17-ին Արագածոտնի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 10.13-ին հրդեհ է բռնկվել Թալին քաղաքի Քոթանյան 11/8 հասցեում:

Պայթյունի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 10.20-ին, մարվել՝ 10.35-ին:

Պարզվել է, որ տեղի է ունեցել 3 կգ-անոց գազի բալոնից արտահոսք եւ բռնկում:

Անգիտակից վիճակում

Հուլիսի 15-ին, ժամը 12.53-ին ստացված ահազանգի համաձայն՝ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Չուխաջյան 18/13 հասցեի բնակիչը չի արձագանքում հեռախոսի եւ դռան զանգերին:

Պայթյունի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Փրկարարները ոստիկանության աշխատակիցների ներկայությամբ բացել են մշված բնակարանի դուռը, որտեղ անգիտակից վիճակում հայտնաբերվել է 72-ամյա Ելենա Սիմոնյանը: Փրկարարները նրան հանձնել են շտապօգնության աշխատակիցներին:

Դիակ՝ Դեբեդում

Հուլիսի 15-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 16.00-ի սահմաններում Ալավերդի քաղաքի Փիրուզյան թաղամասի տարածքում՝ Դեբեդ գետի մեջ, հայտնաբերվել է տղամարդու դի:

Ժամը 16.30-ին բնակիչների ուժերով գետից դուրս է բերվել նույն քաղաքի Եվոյան 1բ/1 հասցեի բնակիչ, 73-ամյա Զավեն Գալստյանի դին, որը հանձնվել է ոստիկանության աշխատակիցներին:

Գրվել է հանդամատում

Հուլիսի 17-ին, ժամը 22.50-ին Ջերմուկ քաղաքի ոստիկանությունից տեղեկություն է ստացվել, որ «Ջերմուկ-ձուկ» ԲԲԸ-ի վարչական շենքից հյուսիս-արեւելք ընկած հանդամատում հայտնաբերվել է ս/թ մարտի 29-ին կորած, Գեղարքունիքի մարզի Չուխաջյան գյուղի բնակիչ՝ 1974 թ. ծնված Գազիկ Հակոբյանի դին, որը ձորից դուրս բերելու եւ տեղափոխելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Պայթյունի վայր մեկնած հրդեհ-փրկարարների ուժերով դին դուրս է բերվել ձորից եւ հանձնվել ոստիկանության աշխատակիցներին:

Հայրնաբերվել է դի

Հուլիսի 21-ին, ժամը 10.45-ին Մարտունու ոստիկանության բաժնից տեղեկություն է ստացվել, որ Սեւան լճի «Միջայեյան եղբայրներ» ՍՊԸ-ին պատկանող լողափից 150 մ հեռավորության վրա հայտնաբերվել է դիակ, եւ այն հանելու համար անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Պայթյունի վայր է մեկնել Մարտունու քաղաքի հրդեհ-փրկարարական ջոկատի պետը:

Արծվանիստ գյուղի բնակիչների կողմից ջրից դուրս է բերվել 40-45 տարեկան, անձը չպարզված տղամարդու դի, որը տեղափոխվել է Մարտունու քաղաքի դիակերծարան:

Վարանգը կանխվել է

Հուլիսի 16-ին, ժամը 15.15-ին Հրազդանի քաղաքապետարանից տեղեկություն է ստացվել, որ Բանավան թաղամասի 12-րդ շենքի տանիքի վանդակաճաղը կանխվել է, առկա է ընկնելու վտանգ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Պայթյունի վայր է մեկնել Կոտայքի մարզային փրկարարական վարչության փրկարար ջոկատը:

Փրկարարների կողմից վանդակաճաղն ապամոնտաժվել է եւ իջեցվել անվտանգ տարածք:

Հուլիսի 19-ին, ժամը 11.06-ին Տավուշի մարզի Բերդ քաղաքի Նժդեհի փողոցի 11-րդ տան բնակիչից ահազանգ է ստացվել, որ իրենց բակի թեմու ծառը թեքվել է եւ վտանգ է սպառնում տան տանիքին ու մուտքի դռանը:

Պայթյունի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Փրկարարների օգնությամբ ծառը մասնատվել է ու տեղափոխվել:

Մեքենան ընկել է ձորը

Հուլիսի 18-ին, ժամը 18:50-ին ահազանգ է ստացվել, որ Եղեգնաձոր-Վայք ավտոճանապարհին տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար, կան տուժածներ, եւ անհրաժեշտ է բուժօգնություն: Պայթյունի վայր մեկնած հանգամանքներում «ՎԱՁ-2107» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթուղուց եւ մասից եւ ընկել ձորը:

Պատահարի հետեւանքով վարորդը՝ 1957 թ. ծնված Հրաչ Սաֆարյանը, տեղում մահացել է, իսկ ուղեւորները՝ 1957 թ. ծնված Համլետ եւ 1982 թ. ծնված Արման Մարկոսյանները, տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Արարատ քաղաքի հիվանդանոց, այնուհետեւ՝ Երեւանի «Էրեբունի» բժշկական կենտրոն:

>>>

միջազգային լուրեր

Գնացքների բախում

Հուլիսի 19-ի վաղ առավոտյան Հնդկաստանի արեւելքում տեղի է ունեցել երկու մարդատար գնացքների բախում: Դեռեւս ան-



հայտ պատճառներով ուղեւորատար արագընթաց գնացքը բախվել է կայանած մեկ այլ գնացքի: Վերջին տվյալներով՝ զոհվել է 61 մարդ, ավելի քան հարյուր ուղեւորներ ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ: Վնասված վագոնները նախատեսված են եղել ամենաէական տոմսերով ուղեւորների համար, ուստի ազատ տեղեր այնտեղ չեն եղել: Պայթյունի վայրում աշխատել են փրկարար-

րական եւ կամավորական խմբեր: Իշխանությունները բացառում են ահաբեկչության տարբերակը: Ըստ նախնական վարկածի՝ պատահարը տեղի է ունեցել մեքենավարի մեղքով, որն անտեսել է արգելող լուսային ազդանշանը:

Հրդեհ հյուրանոցում

Իրաքի Սուլեյմանիա քաղաքի «Սոմա» հյուրանոցում բռնկված ուժգին հրդեհի հետեւանքով ողջակիզվել է 40 մարդ: Ձուկերի մեջ կան կանայք, երեխաներ եւ օտարերկրացիներ: Տեղական իշխանությունների հաղորդմամբ՝ ավելի քան 20 մարդ ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ:

Կրակի զոհ դարձած մարդկանց մեծ մասը Իրաքի հյուսիսում նավթարդյունահանությանը զբաղվող միջազգային նավթային ընկերությունների աշխատակիցներ են եղել:

Հրդեհի բռնկման պատճառները ճշտվում են: Ըստ նախնական վարկածի՝ բռնկման պատճառը

էլեկտրական հաղորդալարերում կարճ միացումն է եղել:

Անսովոր ցուրտ՝ Արգենտինայում

Արգենտինայի մեծ մասը գրաված անսովոր ցուրտն առնվազն ինը մարդու կյանք է խլել: Երկրի հարավում ջերմաստիճանն իջել է մինչեւ -14, իսկ հյուսիսում՝ մինչեւ 0 աստիճան: Ըստ ոչ պաշտոնական աղբյուրների՝ մահացածներն անտուն մարդիկ են եղել:

Օդերեւութաբանների կանխատեսումներով՝ կտրուկ ցուրտը եւ սպասվում նաեւ Չիլիում, Պերուում եւ Բրազիլիայի հարավային շրջաններում: Ցրտից մահվան դեպքեր են գրանցվել նաեւ Պարագվայում, Ուրուգվայում եւ Բոլիվիայում:

Շոգ եղանակի զոհերը

Ճապոնիայում ջերմային հարվածներից միայն մեկ օրվա



ընթացքում զոհվել է հինգ մարդ: Ըստ շտապօգնության ծառայության՝ մահացածները տարեց գյուղացիներ են, որոնք արեւահարվել են դաշտում աշխատելիս: Ճապոնիայի գրեթե բոլոր շրջաններում հաստատվել է շոգ եղանակ: Մայրաքաղաք Տոկիոյում մոտ 200 մարդ ջերմային հարված ախտորոշմամբ տեղափոխվել է հիվանդանոց:

Անցյալ շաբաթվա համգտության օրերին Ռուսաստանի ջրային տարածքներում խեղդվել է 116 մարդ: Արդեն մի քանի շաբաթ պահպանվող անտանելի շոգ եղանակը ստիպում է մարդկանց փրկություն փնտրել ջրային ավազաններում: Սակայն երկրի արտակարգ իրավիճակների նախարարության տվյալներով՝ մարդիկ լողանում են չնախատեսված վայրերում՝ առանց անվտանգության միջոցառում-

ներ ձեռնարկելու, հաճախ նաեւ ալկոհոլի ազդեցության տակ: Ամբողջ շաբաթվա ընթացքում ջրահեղձվել է մոտ 300 մարդ, հաջողվել է փրկել 178-ին:

Չինաստանը հեղեղվել է

Չինաստանի հարավային շրջաններում հորդառատ անձրևների հետեւանքով առաջացած ջրհեղեղներն արդեն 273 մարդու կյանք են խլել, 218 մարդ համարվում է անհետ կորած:

Ընդհանուր առմամբ տարբեր շրջաններում մոտ 57 միլիոն բնա-



կիչ: Հեղեղումներն ամբողջությամբ քանդել են 330 հազար տուն, վնասել 881 հազար շինություն: Հասցված վնասի չափը գերազանցում է 8 միլիարդ դոլարը:

Ֆախիա Թյունիբայան



«<<< Բժիշկների կողմից տուժածների վիճակը գնահատվել է ծանր:

Տուժել են ուղեւորները

Հուլիսի 18-ին, ժամը 19.19-ին տեղեկություն է ստացվել, որ երեւանի Ծովակալ Իսակովի պողոտայում՝ «Արարատ» կոնյակի գործարանին հարակից տարածքում, տեղի է ունեցել ավտոպատահար:

Դեռես չպարզված հանգամանքներում «Մերսեդես S-320» մակնիշի 06 SU 066 պետհամարանիշի ավտոմեքենան հարվածել է աջակողմյան հատվածում կայանված թիվ 75 երթուղու «ԳԱԶԵԼ-32213» մակնիշի 17-26 S պետհամարանիշի միկրոավտոբուսին:

Պատահարի հետևանքով երթուղային տաքսու ուղեւորներ՝ 1964 թ. ծնված Ռոբերտ Գաբրիելյանը եւ 1938 թ. ծնված Էմիլ Ավոյանը տարբեր մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Էրեբունի» բժշկական կենտրոն, իսկ 1989 թ. ծնված Գայանե Պողոսյանը տեղում ստացել է առաջին բուժօգնություն: Ե. Ավոյանը դուրս է գրվել հիվանդանոցից:

Բժիշկների կողմից Ռ. Գաբրիելյանի վիճակը գնահատվել է բավարար:

Վթարի է ենթարկվել երեխա

Հուլիսի 20-ին Գեղարքունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 12.00-ի սահմաններում Գավառ-Սեւան ավտոճանապարհի 10-րդ կմ-ում՝ Հայրավանք գյուղի հատվածում, տեղի է ունեցել ճանապարհատրանսպորտային պատահար:

Դեռես չպարզված հանգամանքներում «Ֆորդ» մակնիշի 14 SL 410 պետհամարանիշի ավտոմեքենան վրաերթի է ենթարկել Քարավաճառի բնակչուհի, 2000 թ. Մարիամ Տոնոյանին:

Պատահարի հետևանքով երեխան ստացել է տարբեր մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Գավառի քաղաքային հիվանդանոց, այնուհետեւ՝ Երեւանի թիվ 1 մանկական կլինիկական հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ երեխայի վիճակը գնահատում է կայուն ծանր: Բարեբախտաբար, նրա կյանքին վտանգ չի սպառնում:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 100 դեպք, որոնց գերակշիռ մասը՝ խտտածածկ տարածքներում:

Այրվել է փնակ

Հուլիսի 16-ին, ժամը 19.00-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Աշտարակ-Երեւան ավտոճանապարհի 1-ին կմ-ին հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 19.20-ին, մարվել՝ 19.35-ին:

Ամբողջությամբ այրվել է 12 քմ մակերեսով տնակ:

Հուլիսի 16-ին, ժամը 19.56-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Կոտայքի մարզում՝ Եղվարդ-Նոր Գեղի ավտոճանապարհի 3-րդ կմ-ին հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 20.14-ին, մարվել՝ 20.20-ին:

Այրվել է 100 քմ մակերեսով խտտածածկ տարածք եւ 4 քմ մակերեսով փայտյա տնակ:

Հրդեհ ավտոմեքենայում

Հուլիսի 16-ին, ժամը 12.09-ին ահազանգ է ստացվել, որ Արարատի մարզում գտնվող գործարաններից մեկի տարածքում ավտոմեքենա է այրվում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 12.30-ին, մարվել՝ 12.34-ին:

Ամբողջությամբ այրվել է Թ. Հովհաննիսյանին պատկանող «ՎԱԶ 2102» մակնիշի 68 OS 489 պ/հ ավտոմեքենան:

Այրվել է անասնակեր

Հուլիսի 16-ին, ժամը 01.55-ին հրդեհ է բռնկվել Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 02.20-ին, մարվել՝ 05.40-ին:

Այրվել է Ռ. Բարեյանին պատկանող տան բակում պահեստավորված 200 հակ անասնակեր:

Նույն օրը, ժամը 23.35-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Լոռու մարզի Շիրակամուտ գյուղում: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 01.15-ին, մարվել՝ 02.30-ին:

Մարտիրոսյանի տան բակում այրվել է 400 հակ անասնակեր:

Հուլիսի 18-ին, ժամը 10.30-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Շիրակի մարզի Գեղամիստ գյուղում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 10.50-ին, մարվել՝ 11.55-ին:

Այրվել են Է. Ասատրյանին պատկանող անասնագոմի տանիքի փայտյա կառուցատարրերը՝ 40 քմ մակերեսով եւ այնտեղ պահեստավորված 1500 կգ անասնակեր:

սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. հուլիսի 15-ից 21-ը ՄՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի եւ հարակից տարածքներում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել չորս երկրաշարժ: Հուլիսի 15-ին Վրաստանի Հիւսիսային քաղաքից 15 կմ դեպի հարավ-արեւմուտք տեղի է ունեցել երկրաշարժ, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3 բալ: Հուլիսի 20-ին Իրանի Լար քաղաքից 90 կմ հարավ-արեւմուտք գրանցվել է 7-8 բալ ուժգնությամբ երկու երկրաշարժ: Երկրաշարժերի հետեւանքով վիրավորվել է 16 մարդ: Հաջորդ օրը 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ է գրանցվել Ադրբեջանի Ղազախ քաղաքից 25 կմ հյուսիս-արեւելք:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է վեց ուժեղ երկրաշարժ, որոնցից չորսը տեղի են ու-

նեցել հուլիսի 18-ին՝ Խաղաղ օվկիանոսում: Ալյասկայի Ալեուտյան կղզիների Նիկոլսկի կղզուց 65 կմ հարավ եւ 50 կմ արեւմուտք տեղի են ունեցել ուժեղ սեյսմիկ իրադարձություններ, որոնք ունեցել են համապատասխանաբար 6.6 եւ 6.0 մագնիտուդ: Պապուա Նոր Գվինեայի Նոր Բրիտանիայի Կիմբե քաղաքից 65 կմ հարավ-արեւելք տեղի են ունեցել 6.9 եւ 7.3 մագնիտուդով երկու երկրաշարժ: Երկու օր անց Կիմբե քաղաքից 70 կմ հարավ-արեւելք գրանցվել է եւս մեկ սեյսմիկ իրադարձություն՝ 6.3 մագնիտուդով: Հուլիսի 21-ին Ինդոնեզիայի Տերնատե քաղաքից 265 կմ հյուսիս-արեւելք գրանցվել է 6.1 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ: Նշված երկրաշարժերի հետեւանքով զոհերի եւ ավերածությունների մասին տեղեկություններ չկան:

ՄՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Հուլիսի 16-21-ը դիտված հիդրոօդերեւութաբանական պայմանները ՀՀ-ում

Հուլիսի 16-ից 20-ը առավելապես հյուսիսային կեսում դիտվել է անձրեւ եւ ամպրոպ: Տեղումների գումարային քանակը կազմել է 5-25 մմ (Տաշիրում՝ 63 մմ, Ապարանում՝ 35 մմ): Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ: Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Արարատյան դաշտում՝ +34...+36°C, Արարատյան դաշտի նախալեռներում եւ Սյունիքի հովիտներում՝ +31...+35°C, Տավուշում՝

+27...34°C, Արցախում եւ Սյունիքի նախալեռներում՝ +27...+31°C, Լոռիում եւ Լեռնային շրջաններում՝ +25...+29°C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է Լեռնային շրջաններում, Լոռիում եւ Սյունիքի նախալեռներում՝ +11...+16°C, Տավուշում, Արցախում եւ Արարատյան դաշտի նախալեռներում՝ +14...+19°C Արարատյան դաշտում եւ Սյունիքի հովիտներում՝ +17...+20°C:



Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում հուլիսի 23-ից 25-ը հյուսիսային առանձին շրջաններում օրվա երկրորդ կեսին եւ գիշերը հնարավոր է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ: 26-ին եւ 27-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին՝ արեւմտյան 2-7 մ/վրկ, ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում՝ 15-20մ/վրկ արագությամբ: Օդի ջերմաստիճանը 26-ին եւ 27-ին կբարձրանա 2-3 աստիճանով:

Հանրապետության տարածքում հուլիսի 23-ից 25-ը հյուսիսային առանձին շրջաններում հուլիսի 23-ի գերեկը Լեռնային շրջաններում կլինի +22...+27°C, Լոռիում՝ +24...+28°C, Տավուշում՝ +28...+32°C, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +31...+35°C, Արարատյան դաշտում՝ +34...+36°C, Սյունիքի հովիտներում՝ +32...+35°C, Սյունիքի նախալեռներում՝ +23...+26°C, Արցախում՝ +29...+31°C:

Օդի ջերմաստիճանը հուլիսի 23-ի գիշերը Լեռնային շրջաններում կլինի +10...+15°C, Լոռիում՝ +12...+15°C, Տավուշում՝ +16...+20°C, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +17...+20°C, Արարատյան դաշտում՝ +18...+22°C, Սյունիքի հովիտներում՝ +18...+23°C, Սյունիքի նախալեռներում՝

Երեւանում հուլիսի 23-ին հնարավոր է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ: 24-ից 27-ը սպասվում է առանց տեղումների եղանակ: Երեկոյան ժամերին քամու ուժգնացում՝ 14-19մ/վրկ արագությամբ: Օդի ջերմաստիճանը 23-ի գիշերը +18...+20°C, ցերեկը՝ +34...+36°C:

Ցավակցություն

Դժբախտ պատահարի պատճառով կյանքից անժամանակ հեռացավ Արագածոտնի ՄԹՎ Արագածի ՌԳՎ-ի հրամանատար, փ/ժ կապիտան Ա. Հ. Բարսեղյանը:

Արթուր Հովհաննեսի Բարսեղյանը ծնվել է 08.03.1968 թ. Ապարան քաղաքում, բանվորի ընտանիքում:

1975-1986 թթ. սովորել է Ապարանի թիվ 1 միջնակարգ դպրոցում: 1986-1988 թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակում: 1988-1993 թթ. սովորել է ավարտել է ՀՀ գյուղ.ինստիտուտի հիդրոմելիորատիվ ֆակուլտետը, ստանալով ինժեների որակավորում:

1998-2003 թթ. աշխատել է «Հայքոմուղկոյուղի» ՓԲԸ «Ապարանի» մասնաճյուղում, որպես ինժեներ: 2003 թ. մինչև 2005 թ. ծառայել է Արագածոտնի ՄԹՎ Ապարանի ՌԳՎ-ում, որպես տեսուչ, 2005 թ.-ից նշանակվել է Ապարանի ՌԳՎ-ի հրամանատարի տեղակալ, նույն թվականի դեկտեմբերից՝ Արագածի ՌԳՎ-ի հրամանատար:

Ամուսնացած էր, երկու դուստրերի հայր էր:

Իրեն ճանաչողների, մտերիմների, ընկերների ու բարեկամների սրտերում նա կհիշվի որպես մարդ, որն իր բարձր պրոֆեսիոնալիզմին զուգահեռ նաեւ ուներ ու մինչ կյանքի վերջ պահպանեց մարդկային վեճ արժեքներ:

Արտակարգ իրավիճակների ղեկավարությունը եւ անձնակազմը վշտակցում են հանգուցյալի հարազատներին ու մտերիմներին:





Հյոգոյի 2005-2015 թթ. գործողությունների ծրագիր Ազգերի եւ համայնքների՝ աղետներին դիմակայելու ունակությունների զարգացում

Սկիզբը նախորդ համարում (Հասկած)

III. 2005-2015 թթ. գործողությունների ծրագրի առաջնայնությունները

Ա. Ընդհանուր դրույթներ

13. Համաժողովը վերահաստատում է, որ ակնկալվող արդյունքներին եւ ռազմավարական նպատակներին հասնելու համապատասխան գործողությունների որոշման համար պետք է հաշվի առնվեն հետեւյալ ընդհանուր դրույթները.

ա) Աղետների նվազեցման ոլորտում ավելացող պարտավորությունների ընթացիկ համատեքստում ՅՆԿԻՄ-ի ռազմավարության մեջ ընդգրկված սկզբունքները լիովին պահպանում են իրենց կարելիությունը:

բ) Հաշվի առնելով միջազգային համագործակցության եւ գործընկերության կարելիությունը՝ յուրաքանչյուր պետություն սեփական երկրի կայուն զարգացման ապահովման, ինչպես նաեւ ռիսկի նվազեցման ոլորտում արդյունավետ միջոցների ձեռնարկման, իր տարածքում աղետների ազդեցություններից բնակչության, ենթակառուցվածքների եւ ազգային այլ ակտիվների պաշտպանության առաջնային պարտավորություն է կրում: Միաժամանակ հարաճուն զլորբալ փոխկախվածության պայմաններում բոլոր մակարդակներով աղետների ռիսկի նվազեցման նպատակով գիտելիքի, կարողությունների եւ շահագրգռության խթանման համար պահանջվում են համաձայնեցված միջազգային համագործակցության հաստատում եւ նպաստավոր միջազգային մթնոլորտի առկայություն:

գ) Աղետների ռիսկերի նվազեցման համալիր բազմառիսկային մոտեցումը պետք է ընդգրկվի հետադեպային, հետբախում-նային կամ աղետների նկատմամբ խոցելի երկրների կայուն զարգացման, օգնության, վերականգնողական եւ վերակառուցողական քաղաքականությունների, պլանների եւ ծրագրերի մեջ:

դ) Ռիսկի կառավարման բոլոր քաղաքականությունները, պլանները եւ որոշումների կայացման գործընթացները (ներառյալ՝ ռիսկի գնահատման, վաղ ազդարարման, տեղեկատվության կառավարման, կրթության եւ ուսուցման գործընթացները) պետք է ներառեն գեներալային հեռանկար:

ե) Անհրաժեշտության դեպքում աղետների ռիսկերի նվազեցման պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնվեն մշակութային բազմազանության, տարիքային եւ խոցելի խմբերի գործոնները:

զ) Անհրաժեշտ տեղեկություններ եւ ռեսուրսներ ունենալու, ինչպես նաեւ աղետների ռիսկի նվազեցման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու լիազորությամբ օժտված լինելու շնորհիվ համայնքները եւ տեղական ինքնակառավարման մարմինները պետք է ի վիճակի լինեն իրականացնելու աղետների ռիսկի կառավարում եւ նվազեցում:

է) Աղետների նկատմամբ խոցելի զարգացող երկրները, մասնավորապես՝ նվազ զարգացածները եւ զարգացող փոքր կղզի-պետություններն արժանի են հատուկ ուշադրության խոցելիության եւ ավելի բարձր մակարդակի ռիսկերի պատճառով, որոնք հաճախ մեծապես գերազանցում են նրանց՝ աղետներին դիմակայելու եւ վերականգնվելու հնարավորությունները:

ը) Անհրաժեշտ է ընդլայնել աղետների ռիսկի նվազեցման ոլորտում միջազգային եւ տարածաշրջանային համագործակցությունն ու օժանդակությունը, ի թիվս այլոց,

հետեւյալ քայլերի միջոցով.

• աղետների ռիսկի նվազեցման ոլորտում կարողությունների ձեւավորման նպատակով գիտելիքի, տեխնոլոգիաների եւ փորձի փոխանցում,

• հետազոտությունների արդյունքների, քաղած դասերի եւ լավագույն փորձի փոխանցում,

• աղետների ռիսկերի եւ տարբեր մասշտաբի աղետների ազդեցությունների մասին այնպիսի տեղեկությունների հավաքում, որոնք կարող են նպաստել կայուն զարգացմանն ու աղետների ռիսկերի նվազեցմանը,

• համապատասխան օժանդակության տրամադրում բոլոր մակարդակներով աղետների ռիսկի նվազեցման, իրազեկության բարձրացման նախաձեռնությունների եւ կարողությունների ձեւավորման միջոցառումների կառավարումն ուժեղացնելու համար՝ նպատակ ունենալով բարելավելու ծրագրերի երկրների աղետներին դիմակայելու կարողությունները,

• «Չափից ավելի պարտքերով ծանրաբեռնված աղքատ երկրներին նպատակաուղղված նախաձեռնության» ամբողջական, արագ եւ արդյունավետ իրագործում հաշվի առնելով աղետների ազդեցությունն այս ծրագրին մասնակցելու իրավունք ունեցող պետությունների սեփական պարտքերի սպասարկման կարողության վրա,

• Ֆինանսական օժանդակություն առկա ռիսկերը նվազեցնելու եւ նոր ռիսկերի առաջացումից խուսափելու համար:

թ) Կանխարգելման մշակույթի խթանումը, ինչպես նաեւ աղետների ռիսկերի նվազեցման նպատակով համարժեք ռեսուրսների համախմբումն ապագայում զգալիորեն հատուցվելիք ներդրումներ են: Ռիսկի գնահատումը եւ վաղ ազդարարման համակարգերը լուրջ միջոցներ են, որոնք պաշտպանում են եւ փրկում կյանքեր, գույք եւ կենսամիջոցներ, ավանդ են ունենում կայուն զարգացման մեջ եւ, ուղղված լինելով հաղթահարման կարողությունների ամրապնդմանը, որպես առաջնահերթ միջոցառում, շատ ավելի ծախսարդյունավետ են, քան հետադեպային արձագանքման եւ վերականգնման միջոցառումները:

ժ) Նաեւ պրոակտիվ միջոցառումների կարիք կա, քանի որ աղետներին հաջորդող օգնության, վերականգնման եւ վերակառուցման փուլերը հնարավորություններ են ընձեռնում կենսամիջոցների վերականգնման, ֆիզիկական եւ սոցիալ-տնտեսական կառուցվածքների այնպիսի նախագծման եւ վերակառուցման համար, որոնք մեծացնում են համայնքների դիմակայման ունակությունները եւ նվազեցնում ապագա աղետների նկատմամբ խոցելիությունը:

ի) Կայուն զարգացման համատեքստում աղետի ռիսկի նվազեցումն ընդհանուր բնույթի խնդիր է եւ, հետեւաբար, միջազգային մակարդակով հաստատված զարգացման նպատակներին, ներառյալ՝ «Հազարամյակների հռչակագրով» փոխհամաձայնեցված զարգացման նպատակներին, հասնելու կարելի տարր: Բացի դրանից, ամեն ինչ պետք է արվի, որպեսզի մարդասիրական օգնությունն օգտագործվի այնպես, որ տեղի ունենա ռիսկերի եւ ապագա խոցելիության առավելագույն նվազեցում:

Բ. Գործողության գերակայությունները

14. Հիմք ընդունելով ՅՆԿԻՄ-ի ռազմավարության վերանայված եզրակացությունները, ինչպես նաեւ Աղետների նվազեցման միջազգային համաժողովի քննարկումներն ու, մասնավորապես, համաձայնեցված ակնկալվող արդյունքներն ու ռազմավարական նպատակները՝ համաժո-



ղովն ընդունում է գործողությունների հետեւյալ իննգ առաջնայնությունները.

ա. երաշխավորել, որ աղետների ռիսկերի նվազեցումը պետական եւ տեղական մշակութային առաջնայնություն է եւ ամուր ինստիտուցիոնալ հիմքերի վրա է,

բ. բացահայտել, գնահատել եւ վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաեւ ամրապնդել վաղ ազդարարման համակարգը,

գ. օգտագործել գիտելիքը, նորարարությունը եւ կրթությունը բոլոր մակարդակներում անվտանգության եւ դիմակայման մշակույթ ձեւավորելու համար,

դ. նվազեցնել հիմքային ռիսկի գործոնները,

ե. բարձրացնել աղետների արդյունավետ արձագանքման պատրաստակալությունը բոլոր մակարդակներում:

15. Ռիսկերի նվազեցման իրենց մոտեցումներում պետությունները, տարածաշրջանային եւ միջազգային կազմակերպություններն ու այլ շահագրգիռ դերակատարները պետք է հաշվի առնեն այս իննգ առաջնայնություններից յուրաքանչյուրի շրջանակներում նշված առանցքային գործողությունները եւ իրականացնեն դրանք իրենց բնորոշ հանգամանքների եւ կարողությունների սահմաններում:

1. Երաշխավորել, որ աղետների ռիսկերի նվազեցումը պետական եւ տեղական մշակութային առաջնայնություն է եւ ամուր ինստիտուցիոնալ հիմքի վրա է

16. Այն երկրները, որոնք մշակում են ռիսկի նվազեցման քաղաքական, օրենսդրական եւ ինստիտուցիոնալ համակարգեր եւ ի վիճակի են առանձնահատուկ եւ չափելի ցուցանիշների միջոցով հասնելու եւ հետեւելու նվաճված առաջընթացին, հասարակության բոլոր հատվածներում ռիսկերի կառավարման, ինչպես նաեւ աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների իրականացման եւ դրանց համապատասխանության շուրջ համընդհանուր համաձայնության գալու ավելի մեծ հնարավորություններ ունեն:

Առանցքային գործողությունները. Ազգային հիւսիսուցիոնալ եւ օրենսդրական համակարգեր

ա) Աջակցել ռիսկի նվազեցման ազգային ինստիտուցիոնալ մեխանիզմների, ներառյալ՝ ազգային բազմաճյուղ պլատֆորմի¹⁰ ստեղծմանն ու հզորացմանը՝ միջնուղային համակարգում խթանելու նպատակով կատարելով կենտրոնականաց միջնուղային մակարդակներով պատասխանատվության բաշխում: Ազգային պլատֆորմները պետք է օժանդակեն նաեւ միջնուղային համակարգման գործողությանը, ներառյալ՝ ազգային ու տարածաշրջանային մակարդակներով ծավալուն երկխոսության հաստատման միջոցով համապատասխան ծրագրերի մակարդակով իրազեկությունը բարձրացնելը:

բ) Ըստ նպատակահարմարության ռիսկերի նվազեցումը ներառել տարբեր մակարդակներում կառավարության գար-

գացման քաղաքականության եւ պլանների մեջ, ներառյալ՝ աղքատության նվազեցման ռազմավարության, ճյուղային եւ բազմաճյուղային քաղաքականության ու պլանների մեջ:

գ) Աղետների նվազեցման ոլորտում ընդունել կամ, որտեղ անհրաժեշտ է, լրամշակել առկա օրենքները, ներառյալ այն կանոնակարգերն ու մեխանիզմները, որոնք խրախուսում են ռիսկի նվազեցման եւ մեղմացման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների կատարումը եւ համապատասխանությունը:

դ) Ճանաչել տեղական ռիսկերի ձեւերի եւ միտումների առանձնահատկությունն ու կարելիությունը, ինչպես նաեւ ապակենտրոնացնել աղետների ռիսկերի նվազեցման պատասխանատվությունն ու ռեսուրսները՝ դրանք բաշխելով համապատասխան ենթակառուցված եւ տեղական իշխանությունների միջոց:

Ռեսուրսներ

ե) Բոլոր մակարդակներով գնահատել աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում առկա մարդկային ռեսուրսների կարողությունները եւ ընթացիկ ու ապագա պահանջներին համապատասխան մշակել կարողությունների ձեւավորման պլաններ ու ծրագրեր:

զ) Ռեսուրսներ հատկացնել համապատասխան բնագավառներում եւ կառավարման մակարդակներում աղետների ռիսկերի կառավարման քաղաքականության, ծրագրերի, օրենքների ու կանոնակարգերի մշակման եւ իրականացման համար, ինչպես նաեւ հատկացնել բյուջեային միջոցներ հստակ որոշված առաջնահերթ գործողությունների իրականացման համար:

է) Կառավարությունները պետք է ցուցաբերեն հստակ քաղաքական կամք աղետների ռիսկերի նվազեցմանը նպաստելու եւ դրանք զարգացման ծրագրերում ընդգրկելու համար:

Համայնքների մասնակցությունը

ը) Առանձնահատուկ բնույթի քաղաքականությունների ընդունման, ցանցերի ստեղծման, կամավորական ռեսուրսների ռազմավարական կառավարման, դերերի եւ պատասխանատվության բաշխման, անհրաժեշտ լիազորությունների պատվիրակման եւ միջոցների տրամադրման միջոցով խթանել համայնքների մասնակցությունը աղետների ռիսկերի նվազեցման գործողություններին:

2. Բացահայտել, գնահատել եւ վերահսկել աղետների ռիսկերը, ինչպես նաեւ ամրապնդել վաղ ազդարարման համակարգը

17. Աղետների ռիսկերի նվազեցման եւ աղետներին դիմակայելու մշակույթի մեկնարկային կետը պայմանավորված է վտանգների մասին իմացությամբ եւ հասարակությունների մեծ մասում հանդիպող աղետի նկատմամբ ֆիզիկական, սոցիալական, տնտեսական եւ միջավայրային խոցելի գործոններով, ինչպես նաեւ նրանով, թե

>>>



Ի՞նչ է Ազգային պլանիչը

Աղետների աճող ազդեցության համակարգային նվազեցման անհրաժեշտությունը մեծապես ընդունվում է աշխարհի գրեթե բոլոր կառավարությունների կողմից՝ հատկապես 2004 թ. դեկտեմբերին ՅՈւԵՄ-ում տեղի ունեցած աղետալի ցունամիից հետո: Սակայն աղետների ռիսկի նվազեցումը (ԱՌՆ) բազմաբնույթ ու բազմաբովանդակ խնդիր է:

Դրա լուծումը պահանջում է քաղաքական և իրավական հետազոտություն, հասարակության կողմից ըմբռնում, գիտելիք, պատասխանատու պլանավորում ու զարգացում, վաղ ազդարարման համակարգերի ստեղծում:

Աղետների ռիսկի նվազեցման պլանիչում էլ, որում ընդգրկված են բազմաթիվ շահագրգիռ կողմեր, կարող է տրամադրել անհրաժեշտ գիտելիքները, հմտություններն ու ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ԱՌՆ-ն քաղաքականության մեջ ներառելու համար, ինչպես նաև զարգացման պլաններ ու ծրագրեր՝ որպես հիմնական բաղադրիչ:

Ի՞նչ է Ազգային պլանիչը Աղետների ռիսկի նվազեցման տեսանկյունից: Այս տերմինը կարելի է բնորոշել որպես մի մեխանիզմ, որում ընդգրկված են բազմաթիվ շահագրգիռ կողմեր, եւ որն ԱՌՆ-ի բարդացումն է իրականացնում բոլոր մակարդակներում: Այն կարգավորում, վերլուծություն ու առաջարկներ է ապահովում առաջնահերթ ոլորտներում, որտեղ անհրաժեշտ են համակարգված գործողություններ: Սակայն, որպեսզի ԱՌՆ Ազգային պլանիչում հաջողությամբ աշխատի, այն պետք է հիմնվի մի շարք հիմնարար սկզբունքների վրա, որոնցից ամենակարևորներն են ազգային կառույցների մասնակցությունն ու ղեկավար դերը ԱՌՆ գործընթացում:

ԱՌՆ Ազգային պլանիչում ստեղծման վերաբերյալ տվյալ ձեռնարկի նպատակն է առկա փորձի վրա ընդհանուր կողմնորոշիչներ տրամադրել ԱՌՆ Ազգային պլանիչում մեծապես ձեռնարկման, կառավարման և զարգացման համար:

Աղետների ռիսկի նվազեցում (ԱՌՆ)

Աղետների ռիսկի նվազեցումը (ԱՌՆ) տարրերի հայեցակարգային կառուցված է, որը դիտարկվում է ամբողջ հասարակության մեջ աղետների ռիսկն ու խոցելիությունը նվազագույնին հասցնելու համարավորություններով հանդերձ և այն նպատակով, որպեսզի խուսափեն (կանխում) կամ սահմանափակեն (նվազեցնեն) պատրաստվածություն) սպառնալիքների անբարենպաստ հետևանքները՝ կայուն զարգացման առավել լայն համատեքստի շրջանակներում:

ԱՌՆ-ն բազմապլան խնդիր է, որը կապված է զարգացման հետ: Այն ներառում է քաղաքական և տեխնիկական տեսանկյունների, ինչպես նաև մասնակցության և ռեսուրսների մոբիլիզացիայի հետ կապված բաղադրիչներ: Այդ պատճառով էլ ԱՌՆ-ի իրականացումը պահանջում է «կոլեկտիվ իմաստություն» և ջանքեր այն մարդկանց կողմից, ովքեր պատասխանատու են քաղաքականության ձեռնարկման և որոշումների ընդունման համար, այդ թվում էլ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների՝ ներառյալ գիտական հաստատությունները, մասնավոր հատվածն ու ՋԼՄ-ները:

ԱՌՆ Ազգային պլանիչում. բնորոշում

«ԱՌՆ Ազգային պլանիչում» հասկացությունը կարելի է բնորոշել որպես երկրին պատկանող մեխանիզմ, որում ազգային կառույցները ղեկավար դեր են կատարում (ֆորումի կամ տարբեր հետաքրքրված կողմերի մասնակցությամբ կոմիտեի տեսքով), եւ որը ծառայում է տարբեր մակարդակներում աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված պրոպագանդային, ապահովում և կարգավորում, վերլուծություն և առաջարկներ առաջնահերթ ուղղություններով, որոնք պահանջում են միջոցառումներ՝ մասնակցության հիմքի վրա կարգավորվող գործընթացի շրջանակներում:

Ազգային պլանիչում պետք է կարգավորող մեխանիզմի գործառնություն իրականացնի ԱՌՆ-ն քաղաքականության մեջ, պլաններում ու զարգացման ծրագրերում ներառելու համար՝ որպես 2005-2015 թթ. Յոգոյի գործողությունների շրջանակային ծրագրի

(ՉԳՇԾ) իրագործման նպատակների հետ համապատասխանության հիմնական բաղադրիչ: Դրա հիմնական նպատակը պետք է լինի օգնել ԱՌՆ ազգային համակարգի ստեղծմանն ու զարգացմանը՝ յուրաքանչյուր երկրի պահանջներին համապատասխան:

Ազգային պլանիչում խնդիրները

ԱՌՆ-ի համար Ազգային պլանիչում համընդհանուր նպատակն է որոշակի ներդրում ունենալ սեփական երկրի կայունության ամրապնդման մեջ՝ աղետների ազդեցության դեպքում, կայուն զարգացում ապահովելու նպատակով՝ իրագործելով հետևյալ խնդիրները.

- Կարգավորող մեխանիզմի գործառնություն իրականացնել տարբեր շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ուժեղացման նպատակով, որպեսզի ապահովվի ԱՌՆ ուղղությամբ միջոցառումների կայունությունը խորհրդատվության և մասնակցության հիմքի վրա՝ ՉԳՇԾ նպատակների իրագործմանը համապատասխան:

- Օժանդակել կանխարգելման մշակույթի ձեռնարկման համար նպաստավոր իրադրության ստեղծմանը՝ ԱՌՆ-ն քաղաքականության, պլանների և զարգացման ծրագրերում ներառելու կարևորության վերաբերյալ քարոզչության և իրազեկվածության բարձրացման միջոցով:

- Նպաստել ԱՌՆ-ի ինտեգրմանը ազգային քաղաքականությանը, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերին և պլաններին, ինչպես նաև միջազգային և երկկողմանի քաղաքականություններին և զարգացմանն աջակցող ծրագրերին:

Ազգային պլանիչում կազմը

Ազգային պլանիչում պետք է հիմնված լինեն գոյություն ունեցող ցանկացած համակարգի վրա, որը վերաբերում է Աղետների ռիսկի նվազեցմանը: Դրանք պետք է նպաստեն ճյուղային նախարարություններում զարգացման համար պատասխանատու հիմնական կառույցների, աղետների դեմ պայքարող մարմինների, գիտական ու ակադեմիական հաստատությունների, ՉԿ-ների, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ազգային ընկերության, մասնավոր հատվածի,



հանրային կարծիք ձեռնարկող կառույցների և ԱՌՆ-ի ծրագրերի հետ առնչվող այլ կողմերի մասնակցությանը: Չնայած իրագործմանը Ազգային պլանիչում ներառված կարգավիճակով մշտական կառույց լինի, որպեսզի համակարգի բոլոր շահագրգիռ գործընկերներին և լիազորություններ ունենա ազգային մակարդակով աղետների դեմ պայքարի ու դրանց նվազեցման գործողությունները կառավարելու համար: Գլխավորող հաստատությունը կամ նախարարությունը պետք է բավական բարձր կարգավիճակով մշտական կառույց լինի, որպեսզի համակարգի բոլոր շահագրգիռ գործընկերներին և լիազորություններ ունենա ազգային մակարդակով աղետների դեմ պայքարի ու դրանց նվազեցման գործողությունները կառավարելու համար: Գլխավորող հաստատությունը կամ նախարարությունը պետք է կառավարման ու համակարգման հզոր ներուժ ունենա, որպեսզի կարողանա արդյունավետ օգտագործել քաղաքական պարտավորությունները և մոբիլիզացնել ռեսուրսներն ու գիտելիքները՝ ԱՌՆ-ի նպատակով:

ԱՌՆ Ազգային պլանիչում ներառված կարող են լինել նախարարություններ, ինչպես նաև առաջնահերթ կառույցներ, որոնք կարող են հրավիրել նաև դոնոր և ՄԱԿ-ի համակարգի կազմակերպություններին:

Ազգային պլանիչում հիմնական գործառնությունները

- ԱՌՆ Ազգային պլանիչում ներառված կարող են լինել նախարարություններ, որոնք օգնությունները կարող են լուծել միմյանցով պայմանավորված սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրներ: Դրանք նպաստում են ԱՌՆ-ի ոլորտում էական պահանջումների բացահայտմանը, ռեսուրսների հատկացմանը, միջոցառումների ժամանակացույցի մշակմանը և դրանց մոնիտորինգի իրականացմանը՝ ՉԳՇԾ-ին համապատասխան:

- ԱՌՆ Ազգային պլանիչում ներառված կարող են լինել նախարարություններ, որոնք կարող են հրավիրել նաև դոնոր և ՄԱԿ-ի համակարգի կազմակերպություններին:

- ԱՌՆ Ազգային պլանիչում ներառված կարող են լինել նախարարություններ, որոնք կարող են հրավիրել նաև դոնոր և ՄԱԿ-ի համակարգի կազմակերպություններին:

- ԱՌՆ Ազգային պլանիչում ներառված կարող են լինել նախարարություններ, որոնք կարող են հրավիրել նաև դոնոր և ՄԱԿ-ի համակարգի կազմակերպություններին:

ինչպես նաև վտանգներն ու խոցելիությունը փոխվում կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Սրան հետևում են առկա գիտելիքների հիման վրա ձեռնարկված քայլերը:

Առանցքային գործողությունները Ազգային և սեղանական մակարդակներում ռիսկերի գնահատումներ

ա) Մշակել, պարբերաբար թարմացնել և համապատասխան ձեռնարկով որոշում կայացնողների, ռիսկի ենթակա¹¹ հասարակության և համայնքների շրջանում լայնորեն տարածել ռիսկային քարտեզները և համապատասխան տեղեկատվությունը:

բ) Ազգային և ենթազգային մասշտաբներով մշակել աղետների ռիսկերի և խոցելիության ցուցանիշների համակարգ, որը որոշում կայացնողներին կօգնի գնահատելու աղետի թողած հետևանքները սոցիալական, տնտեսական և բնապահպանական պայմանների վրա¹² և դրանք տարածել որոշում կայացնողների, ռիսկի ենթակա բնակչության ու հասարակության շրջանում:

գ) Կանոնավորապես գրանցել, վերլուծել, ամփոփել և միջազգային, տարածաշրջանային, պետական ու տեղական լծակների միջոցով տարածել աղետների իրադարձությունների, հետևանքների և

կորուստների մասին վիճակագրական տեղեկատվություն:

Ծանոթագրություն.

8 Կայուն զարգացման համաժախարհային զագաթնաժողովի Յոհանեսբուրգի իրագործման լույսով, Յոհանեսբուրգ, Հարավային Աֆրիկա, 2002թ. օգոստոսի 26-սեպտեմբերի 4, դարբ. 37 և 65:

9 Ինչպես վերահաստատել է Գլխավոր ասամբլեայի 23-րդ հասուկ նստաօրհանի «Կանաչ 2000. Գեոդեմոսի հավասարությունը, զարգացումը և խաղաղությունը XXI դարում» գեղարվեստը:

10 Ազգային պլանիչում ստեղծվող Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 1999/63 և Գլխավոր ասամբլեայի թիվ 56/195, 58/214, և

58/215 բանաձեռների լույսով: «Ազգային պլանիչում» ընդհանրական հասկացություն է, որն օգտագործվում է աղետների ռիսկի նվազեցման գործունեության համակարգման և ֆալսիֆիկացման ուղղությամբ ազգային մեխանիզմները վկայակոչելու համար, որոնք բնույթով ռեֆերենցիալ են բազմաձևային և բազմափուլային ու ներառեն երկրի հանրային, մասնավոր հասկանալի և ֆալսիֆիկացման հասարակության բոլոր անդամներին, այդ թվում, ըստ նյութական հարմարության, Միավորված ազգերի կազմակերպության ազգային մակարդակով ներկայացված գործակալությունները: 11 Տե՛ս «Գործողությունների ծրագիր» սողասկի 1-ին, 2-րդ և 3-րդ ծանոթագրությունները: 12 Տե՛ս սողասկի 1-ին, 2-րդ և 3-րդ ծանոթագրությունները:



Ծնող ու երեխա

Մ Ծնող լինելը հասուն կյանքի պարզեցման մեկն է: Ոչինչ այդքան ուրախություն եւ հպարտություն չի պարզեցում ծնողին, քան երջանիկ, գործուն եւ սիրող երեխան: Երեխայի աճի եւ զարգացման փուլերի մասին մենք բազմիցս խոսել ենք եւ նշել, որ յուրաքանչյուր տարիքային փուլ ունի իր դրսևորման առանձնահատկությունները: **Չարկ ենք համարում ավելացնել, որ յուրաքանչյուր երեխա յուրահատուկ է եւ անկրկնելի:**



Նենալ այդ կյանքին: Մեծահասակը հաճույք է ստանում, երբ տեսնում է իր աշխատանքի արդյունքը, իսկ երեխային հաճույք է պատճառում հենց գործընթացը:

Ի՞նչ է ուզում երեխան

- Նա ուզում է ճանաչել աշխարհը:
- Նա ուզում է ունենալ սեփական փորձի եւ սխալի իրավունք:

- Նա ուզում է մասնակից լինել մեծահասակների գործերին եւ լինել նրանց հետ հավասար հարթակի վրա:

- Նա պարզապես ուզում է երջանիկ լինել իր ծնողների հետ:

Խորհուրդ ծնողներին

- Եղեք ճշտապահ եւ համբերատար:
- Երեխայի հոգեբանությունը հասկանալու համար պետք է լինել նրա մասն, այսինքն՝ պետք է նայել աշխարհին նրա աչքերով:

- Եղեք երեխայի կողքին ոչ միայն ֆիզիկապես, այլեւ ձեր մտքերով, հույզերով եւ արձագանքեք նրա քայլերին:

- Լինել երեխայի կողքին նշանակում է լինել վկա նրա յուրաքանչյուր գործողությանը:

- Հաճախակի նայեք ձեր փոքրիկի աչքերին, լսեք նրան:

- Համբերատար եղեք, օգնեք նրան հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում մեծահասակների աշխարհը:

Հաճախ ծնողները կարծում են, որ եթե երեխան փոքր է, ապա նա շատ հարցեր ունի իրավունք չունի որոշումներ կայացնելու: Նման մոտեցումը, բնականաբար, ճնշում է երեխային: Հնարավորություն սովորել, որ երեխան լինի իր նման: Եթե դուք երեխային վերաբերվեք որպես չհասկացողի կամ հիմարի, ապա հավատացեք, որ երեխան այդպիսին էլ կդառնա: Քանի որ դուք այդ մասին ամեն անգամ հիշեցնելով՝ սպանում եք այն որակները, որոնք կարող են զարգանալ: Որքան նրան շուտ սովորեցնեք ինքնուրույն լինել, այնքան ավելի լավ: Ընդգրկեք երեխային ձեր առօրյա գործերի մեջ եւ հավատացեք՝ պրակտիկ գործունեության մեջ նրա ինտելեկտուալ կարողություններն ավելի արագ կզարգանան:

Իրավահավասարություն

Ինչպես բոլորը, այնպես էլ երեխան ունի խոսքի եւ անկախ լինելու իրավունք: Եթե դուք նման մոտեցում չնշակեք, ապա ձեզ մոտ կծեավորվեն ղեկավարի եւ ենթակայի հարաբերություններ:

Պատկերացեք, որ դուք ուղեկցող եք եւ ծանոթացնում եք ձեր մոլորակը նոր եկած անդամին՝ փոքրիկին, եւ ձեզանից է կախ-

ված, թե որքան հասկանալի կներկայացնեք նրան այս աշխարհը: Հետաքրքրվեք երեխայի՝ ամեն մի նոր երեւույթի բացահայտումով, քանի որ նրա համար ամեն ինչ նոր է եւ անհասկանալի:

Խաղը մի յուրօրինակ աշխարհ է

Խաղը երեխայի համար աշխարհը ճանաչելու ճանապարհն է եւ այդ ընթացքից հաճույք ստանալը: Մի՛ բարկացեք երեխայի վրա, որ նա կեղտոտել է իրեն, ավելի լավ է նրան բացատրել, որ դուք չեք ուզում, որ նա կեղտոտի իր շորերը, միջավայրը: Սա նման է նրան, որ հնէաբանին արգելեն ուսումնասիրություններ անել, այսինքն՝ կատարել իր աշխատանքը: Այդպիսին է երեխաների աշխատանքը՝ ուսումնասիրել շրջապատը, շրջապատող իրերը եւ նրանց հատկությունները: Որպես կանոն, երեխան գիտի, թե տվյալ պահին իրեն ինչ է պետք եւ ինքն ինչով է ուզում զբաղվել: Նա կզբաղվի այն ամենով, ինչ իրեն հաճելի է եւ նպաստում է իր զարգացմանը՝ իրեն ձեռնարկ անելով պահելու փոխարեն:

Մի՛ համեմատեք ձեր երեխային ուրիշների հետ, տարբեր երեխաներ տարբեր ձեւով եւ տարբեր տարիքում են դրսևորում իրենց առանձնահատկությունները: Ավելի լավ է՝ խթանեք նրա զարգացումը խրախուսելու միջոցով, քան նրան ճնշելու, ուրիշների հետ համեմատելու ճանապարհով: Հաճախ ասացեք «Կեցցես», «Դու անպայման կանես դա»: Փորձեք երեխայի ուշադրությունը շատ չգրավել իր անհաջողություններով, ավելի լավ է նրան քաջալերեք իր հաջողություններով եւ ձեռքբերումներով:

Տ որիան առաջացել է հունարեն «վախ» բառից, որը պայմանավորված չէ որեւէ ռացիոնալ պատճառով: Դրանք կաշուն, ոչ աղեկվատ վախի ապրումներ են, որոնք առաջանում են որոշակի իրավիճակում: Վախ զգում են բոլոր մարդիկ, եւ վախը վերանում է ռեալ վտանգն անցնելուց հետո, իսկ ֆոբիայի դեպքում մարդը, որպես կանոն, հասկանում է, որ իր ռեակցիան ոչնչով պայմանավորված չէ եւ նույնիսկ անհիմաստ է, սակայն չի դադարում վախենալ: Վախերը, որպես այդպիսին, ակտիվ են արտահայտվում, մարդը միշտ փնտրում է ուղիներ դրանցից ազատվելու համար: Ֆոբիան պատիվ զգացողություն է, մարդը խուսափում է տհաճ իրադրություններից, բայց չի ձգտում ազատվել իր կաշուն վիճակից, քանի որ հոգու խորքում հասկանում է, թե որքան հարմար է գտնվել վախի ենթակայության տակ, քանի որ ֆոբիան տվյալ պահին պաշտպանական ֆունկցիա է կատարում:

Վախն ամբողջությամբ իր ձեռքն է վերցնում եւ կառավարում է մարդուն՝ թույլ չտալով նրան հանգիստ ապրել: Մարդը խուճապի է մատնվում եւ կարող է դիմել անհավանական ու անսպասելի քայլերի, երբ բախվում է իր վախի օբյեկտի հետ:

Վախն ունի եւ՝ դրական, եւ՝ բացասական բեւեռներ: Բացասականն այն է, որ երեխան իր զարգացման շրջանում ամեն օր մի նոր բան է սովորում, իսկ վախը կարող է խոչընդոտել նրա ուսուցմանն ու զարգացմանը: Ֆոբիաները կարող են արտահայտվել նաեւ վաղ տարիքից, սակայն հիմնականում դրսևորվում են դեռահասության տարիքում: Եթե երեխան վախենում է, պետք չէ նրան ամաչեցնել կամ ծիծաղել նրա վրա: Միասին փորձեք գտնել այն երեւույթը կամ առարկան, որից երեխան վախենում է, հետո փորձեք պարզել, թե որոնք են երեխայի վախի իրական պատճառները:

Ինչպես հաղթահարել ֆոբիաները

Վախն օրգանիզմի նորմալ ռեակցիան է իրական կամ երեւակայական վտանգի նկատմամբ: Վախի ժամանակ մարդու հույզերը եւ զգացումներն այնքան բուռն են, որ սկսում են նրան իշխել: Ֆոբիան կապված չէ իրական վտանգի հետ, սակայն հայտնվում է այն ժամանակ, երբ մարդը բախվում է որեւէ իրավիճակի հետ: Ֆոբիա ունեցող մարդն իր ողջ կյանքի ընթացքում ունենում է հետեւյալ միտքը. «Միայն թե չբախվեմ դրա հետ»:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ կանայք 2 անգամ ավելի շատ են տառապում ֆոբիաներով, քան տղաները: Քանի որ կինը համարվում է օջախի պահպանը եւ երեխաներին դաստիարակողը, նա բնությունից ժառանգել է ավելի զգույշ, ուշադիր եւ զգոն լինելը:

Ինչ ծագում ունեն ֆոբիաները

Այս ամենի ամենահիմքում ընկած է մարդու ժառանգականությունը, քանի որ որոշ մարդիկ գենետիկորեն հակված են տագնապային վախերի: Որպես կանոն, նման մարդիկ շատ զգայուն են եւ գերհուզական: Ըստ մասնագետների՝ նրանց բնածին հակումը կարող է ուժեղանալ դաստիարակության եւ կյանքի իրավիճակներից: Ֆոբիաների ձեւավորման վրա ազդում են նաեւ սոցիալական միջավայրը, իրավիճակները:

Ֆոբիայի առաջացման պատճառ կողող է հանդիսանալ որեւէ երեւույթից ուժեղ վախենալը: Երբ մարդը մի անգամ վախենում է միջատից, ապա այդ անվստահ կենդանին մարդու կողմից արճադաս ընկալվում է որպես սպառնալիք:

Ֆոբիաներից կարելի է ազատվել նաեւ ինքնուրույն.

1. Թույլ մի՛ տվեք, որ վախը ձեզ իշխի՝ Վախը սահմանափակում է մեր ազա-



տությունը եւ դարձնում է մեզ իր ստրուկը՝ ենթարկելով իրեն: Որքան շատ ենք մենք ենթարկվում մեր վախին, այնքան շատ է նա մեզ իշխում:

2. Փորձեք հասկանալ ձեր վախի իրական պատճառները

Շատ կարեւոր է իմանալ, թե որտեղից են գալիս մեր վախերը: Փորձեք հասկանալ՝ ինչ է այն ձեզ տալիս, եւ ինչ կլինի, եթե վախը չլինի: Երբ մարդը գիտակցում է իր թույլ կողմերը, այդ ժամանակ դրանք հաղթահարելը եւ վերահսկելը ավելի հեշտ է դառնում:

3. Ֆոբիան հաղթահարելու տարբերակներից է ֆոբիային ընդառաջ գնալը

Երբ մարդը պարբերաբար ստեղծում է այնպիսի իրավիճակ, որտեղ ինքը վախենում է եւ գնում է ընդառաջ իր վախին, այլ

ոչ թե փախուստի է դիմում, այդ ժամանակ նման իրավիճակը նրա համար դառնում է սովորական: Օրինակ՝ թռչունից վախենալու ֆոբիան հաղթահարելու համար կարելի է սկզբնական շրջանում սովորել թռչնի նկարին հանգիստ նայել, այնուհետեւ նրան դիտել իրականում եւ աստիճանաբար մոտենալ, շոյել եւ այլն: Այս մոտեցումը ոչ թե օգնում է ազատվել ֆոբիայից, այլ պարզապես օգնում է վախը վերահսկել, այն պահել շրջանակների մեջ:

4. Մի՛ դադարեք ջանքեր գործադրել

Վախերը որպես կանոն խոսում են բարձր հուզականության մասին: Սա դրական հատկություն է, ուստի պետք չէ անխնայ պայքարել դրա դեմ: Պարզապես սովորեք վախ ներշնչող իրավիճակում վերահսկել ձեր հույզերը:

5. Հիշեք երջանիկ օրերը

Տազնապի ժամանակ հիշեք ձեր կյանքում տեղի ունեցած երջանիկ օրերից մեկը, երբ դուք ձեզ լավ եք զգացել, փորձեք այդ իրավիճակն ամբողջությամբ զգալ, մտքեք այդ իրավիճակի մեջ: Այս մոտեցումը կօգնի ձեզ ավելի հեշտ ապրել վախը:

Վախից ամբողջությամբ ազատվել հնարավոր չէ, քանի որ այն որպես այդպիսին ինքնապաշտպանական ֆունկցիա է կատարում մարդու համար, վախը մարդուն հնարավորություն է տալիս լինել միշտ զգոն եւ ուշադիր, խուսափել վտանգներից: Երբ վախն անցնում է իր շրջանակները, ապա այն սկսում է անհանգստացնել եւ խանգարել ապրելուն: Ուստի մի՛ ստեղծեք ձեզ համար կյանքը դժվարացնելու լրացուցիչ պատճառներ, ամեն ինչ կարելի է վերահսկել եւ կառավարել, եթե իսկապես կա դա անելու ցանկություն:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու



15 միՖ օգտակար սննդի մասին

Օգտակար եւ առողջ սննդի մասին կարծիքները շատ են, ու մի քանիսն արդեն համոզմունք են դարձել, սակայն դրանք իրական ոչ մի հիմք չունեն:

ՄիՖ 1. Հուն բանջարեղենը եփածից օգտակար է:

Իրականում ոչ բոլոր բանջարեղենների մասին կարելի է միանշանակ պնդել դա: Օրինակ, սմբուկը կամ կանաչ լոբին պետք



չէ հում ուտել, այլ պետք կարելի է թունավորվել: Բացի դրանից, ոչ բոլոր մարդկանց ստամոքսն է ընդունակ մարսելու հում բանջարեղենը:

ՄիՖ 2. Լյարդ ուտելը շատ օգտակար է:

Իրականում լյարդի մեջ, իհարկե, շատ են վիտամիններն ու հանքային աղերը, սակայն քիչ



չեն նաեւ ճարպերն ու խոլեստերինը: Ամերիկյան դիետոլոգիական ասոցիացիայի ուսումնասիրությունները պարզել են, որ խոշոր եղջերավոր անասունների լյարդի մեջ վտանգավոր քանակությամբ քիմիական նյութեր ու հորմոններ են կուտակվում, որոնք կենդանու օրգանիզմ են մտնում կերի միջոցով:

ՄիՖ 3. Ձուկը նիհարելու համար շատ արդյունավետ է:

Իրականում ձկան մեջ ճարպերը նույն քանակությամբ են, ինչ խոզի ապխտած մսի: Օրինակ, 100 գրամ ձկան մեջ կա 12 գրամ ճարպ, այն դեպքում, երբ 100 գրամ տավարի մսի մեջ ճարպերը 3 գրամ են:

ՄիՖ 4. Ձուկն օգտակար է ուղեղի աշխատանքի համար:

Իրականում ձուկն այստեղ կապ չունի: Դա ամերիկացի մի գիտնականի արած հայտարարությունն էր, ով մարդու ուղեղի մեջ ֆոսֆոր հայտնաբերելով, ենթադրել էր, թե հենց ֆոսֆորն է լավացնում ուղեղի աշխատանքը: Դրա համար էլ խորհուրդ էր տրվում ձուկ շատ ուտել, որովհետեւ այն մեծ քանակությամբ ֆոսֆոր է պարունակում: Սակայն ֆոսֆորն ուղեղի աշխատանքի վրա չի ազդում, իսկ եթե, այնուամենայնիվ, մարդու օրգանիզմն այդ նյութի պահանջ ունի, ապա պարտադիր չէ ձուկ ուտել, լրիվ բավարար են նաեւ խմորը, բանջարեղենն ու կաթը:

ՄիՖ 5. Մարգարինն օգտակար է, քանի որ կենդանական ճարպեր չի պարունակում:

Իրականում ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աթերոսկլերոզ (երակային հիվանդություն) առաջացնելու հարցում մարգարինի «ռիսկն» ավելի բարձր է, քան կարագինը: Իսկ ճարպային պարունակությունը նույնն է:

ՄիՖ 6. Չեփցի չեն գիրանում:

Իրականում ձեթը 95-97 տոկոս ճարպ է պարունակում: Չմայած, պետք է նաեւ նշել, որ ի տարբերություն կենդանական յուղերի՝ ձեթն աթերոսկլերոզ չի առաջացնում:

ՄիՖ 7. Ավոկադոն վտանգավոր է առողջության համար:

Իրականում հակառակն է

ապացուցված: Ավոկադոյի մեջ նյութեր կան, որոնք արյան խոլեստերինի մակարդակն իջեցնում են:

ՄիՖ 8. Որոշ սննդատեսակներ, օրինակ՝ անանասը, գրեյպֆրուտը կամ կաղամբի ապուրը, կարող են այրել ճարպերը եւ նվազեցնել քաշը:



Իրականում ոչ մի սննդատեսակ ճարպ չի այրում, առավել եւս՝ քաշ չի նվազեցնում: Կան որոշները, որոնք կոֆեինի հետ միասին օգտագործելիս արագացնում են նյութափոխանակությունը, ինչը, սակայն, բավարար չէ քաշ կորցնելու համար: Նիհարելու լավագույն միջոցը եղել է մնում է կալորիաների քիչ օգտագործումն ու ֆիզիկական ակտիվությունը:

ՄիՖ 9. Սպանախը ամենաշատն է երկաթ պարունակում:

Իրականում սա սխալ կարծիք է: Այս թյուրիմացության մեղավորը մի ամերիկացի դիետոլոգի քարտուղարուհին է: 30-ական թվականներին դիետոլոգն ուսումնասիրում էր սննդի մեջ միկրոէլեմենտների պարունակության հարցերը, ու նրա քարտուղարուհին սպանախի տվյալները լրացնելիս սխալ էր թույլ տվել, ստորակետը մեկ թիվ աջ էր դրել: Սպանախի մեջ երկաթ, իհարկե կա, բայց ոչ այնքան շատ, որքան, ասենք, շաքարի, ձվի կամ ծովամթերքի մեջ: Հարկ է նաեւ նշել, որ սպանախում այնպիսի թթուներ

կան, որոնք թույլ չեն տալիս, որ այս սննդատեսակի մեջ պարունակվող երկաթի 95 տոկոսը օրգանիզմ մուտք գործի:

ՄիՖ 10. Չորացրած մրգերը՝ չրերը, վիտամին չեն պարունակում ու բացարձակ անօգուտ են:

Իրականում չոր մրգերը վիտամին պարունակում են, բայց, իհարկե, ոչ այն քանակությամբ, ինչ թարմ մրգերի մեջ է: Սակայն, ինչ խոսք, չիրը նույնպես օգտակար է:

ՄիՖ 11. Շաքարից գիրանում են:

Իրականում շաքարի ու գիրության միջեւ ուղիղ կապ չկա: Գիրանում են շատ կալորիաներից, այլ ոչ թե քաղցր թյուրիզմից: Կապ ունի այն, թե ինչ սննդից է մեր օրգանիզմը կալորիաներ ստանում: Ճարպակալելու հավանականությունն ավելի շատ ունեն ոչ թե քաղցրասերները, այլ ճարպոտ սնունդ օգտագործողները:

Փրկությունը ոչ թե առանց շաքարի մաստակ առնելու մեջ է, այլ՝ շատ շարժվելու եւ սննդի կալորիականությանը հետեւելու մեջ: Գիտնականները նաեւ հավաստում են, որ ալկոհոլը կազմվածքին ավելի մեծ վնաս է հասցնում, քան՝ շաքարը:

ՄիՖ 12. Աղը վնասակար է:

Իրականում աղը շատ կարեւոր է նյութափոխանակության համար: Երկար ժամանակ սրտամոթային հիվանդներին բացարձակապես արգելվում էր աղ օգտագործել, սակայն այսօր բժիշկներն այդ կարծիքին չեն: Աղը թույլատրվում է, բայց ճնշման հետ խնդիր ունեցողներին խորհուրդ է տրվում օրական 5 գրամից ավելի չօգտագործել:

ՄիՖ 13. Պահածոները վնասակար են:

Իրականում սա ճիշտ է միայն մսի դեպքում: Իսկ, օրինակ, ձկան



պարագայում հակառակն է: Ժամանակակից ջերմային մշակումից հետո նույնիսկ ամենախոշոր ձկների ոսկորները փափկում են ու հնարավոր է դառնում դրանք էլ ուտել, ինչը օրգանիզմի համար կալցիումի լրացուցիչ աղբյուր է: Այնպես որ, հանգիստ կարող եք պահածոյացված ձուկ օգտագործել:

ՄիՖ 14. Թարմ մրգերը սառեցվածներից օգտակար են:

Իրականում քաղելուց հետո որքան երկար են մնում մրգերը, այնքան ավելի շատ են վիտամիններ կորցնում: Իսկ մրգերը սովորաբար սառեցվում են քաղելուց անմիջապես հետո, օգտակար նյութերն էլ՝ նրանց հետ միասին, այնպես որ, դրանցում վիտամինային պարունակությունն ավելի բարձր է:

ՄիՖ 15. Ձուն բարձրացնում է օրգանիզմում խոլեստերինի մակարդակը:



Իրականում ձվի մեջ խոլեստերին կա, բայց այն մարդու օրգանիզմ մուտք չի գործում:

Մեզնից շատերի ականջին սովորական է հնչում, երբ լսում են, որ ինչ-որ մեկը վախենում է փակ ու նեղ տարածքներից, վերելակից կամ ասենք՝ բարձրությունից: Սակայն գիտությանը հայտնի են նաեւ այնպիսի ֆոբիաներ, որոնք զարմանք են առաջացնում:

Մագնիտոֆոբիա՝ վախ ուտելիք պատրաստելուց: Այս ֆոբիայով տառապողները նաեւ սարսափում են խոհարարներից ու նույնիսկ նրանցից, ովքեր ուղղակի ձվածեղ են պատրաստում:

Պեդոֆոբիա՝ վախ տիկնիկներից: Նման խնդիր ունեցող մարդիկ վախենում են ոչ միայն տղաների ու անճոռների տիկնիկներից, այլ նույնիսկ փափուկ խաղալիքներից ու բարբիներից: Նրանց համար սարսափելի են նաեւ խանութի մանեկեկները, ինչի պատճառով գնումներ կատարելը այս մարդկանց համար դառնում է անստանալի:

Դեիպնոֆոբիա՝ վախ սեղանի շուրջ տարվող խոսակցություններից: Բոլորիս հետ էլ պատահել է հայտնվել անձանթ միջավայրում, ընթրել կամ սրճել անձանթ մարդկանց հետ, գրուցել, սակայն մեզնից շատերի համար դա երբեք խնդիր

Տարօրինակ ֆոբիաներ

չի եղել: Բայց կան մարդիկ, ովքեր սարսափում են սեղանի շուրջ անձանթների, նույնիսկ ծանոթների հետ նստելուց եւ գրուցի բռնվելուց, դրա համար էլ հազվադեպ են հյուր գնում եւ ընդունում:

Էյզոպտոֆոբիա՝ վախ հայելիներից: Նման ֆոբիայով տառապողները տազնապում են իրենց հայելու մեջ նայելիս, նրանց թվում է, թե այն կկլանի իրենց, կամ էլ արտացոլանքն ու իրական մարմինը կփոխվեն տեղերով:

Կատիստոֆոբիա՝ վախ նստելուց: Նման ֆոբիա կարող է առաջանալ ծանր թուրքից բուժվելուց հետո կամ բռնության հետեւանքով, որի ժամանակ մարդուն ստիպել են երկար ժամանակ նստած մնալ՝ կապկապված վիճակում: Երբեմն նաեւ պատճառը լինում է նստելուց ստացած վնասվածքի մասին հիշողությունը: Այս ֆոբիան արտահայտվում է տագնապի զգացումով, շնչառության դժվարությամբ, քային կողմնորոշման կորստով:

Հիպոպոտոմնոստրոսեսկիպեդալոֆոբիա՝ վախ երկար ու բարդ բառերից: Նման ֆոբիայով տառապողները հենց լսում են երկար բառեր, սկսում են շնչա-

հեղծ լինել, սրտխառնոց ու սրտխփում զգալ, քրտնել:

Աբյուտոֆոբիա՝ վախ ջրով լողանալուց, լվացվելուց եւ մաքրվելուց: Երբ այս ֆոբիան արտահայտվում է փոքր երեխաների մոտ, սովորական է: Սակայն նման վախ ունենում են նաեւ մեծահասակները, ովքեր աշխատում են որքան հնարավոր է ուշ-ուշ հետեւել իրենց հիգիենային:

Նամոֆոբիա՝ վախ բջջայինի բացակայությունից կամ դրա լռությունից: Այս ֆոբիան սկսել է արտահայտվել այն ժամանակվանից, երբ մոբիլ հեռախոսները մեծ թափով մտան իրականություն: Նման վախով տառապողները սարսափում են այն մտքից, որ կարող են բջջայինը մոռանալ տանը կամ ընդհանրապես զրկվել դրանից: Նրանք տագնապի նոպաներ են ունենում, երբ բջջայինը նույնիսկ մի քանի րոպեով լռում է: Որքան շատ են նրանք հեռախոսով խոսում, այնքան լավ են իրենց զգում: Եթե այս ֆոբիայով տառապող մարդուն մեկ օր ոչ ոք չզանգի, նա շատ խոր ու ծանր դեպրեսիայի մեջ կընկնի:

Հիպոֆոբիա՝ վախ քնելուց: Որոշ հոգեբույժ-մեթոդաբանները կարծում են,

որ սա շիզոֆրենիայի արտահայտումներից մեկն է, բայց նրանց մի մասն էլ համոզված է, որ այս ֆոբիան լրիվ «ինքնուրույն» է և առանձին հոգեկան խանգարում է:

Ահա տարօրինակ ֆոբիաներից եւս մի քանիսը:

Ակնեֆոբիա՝ վախ մաշկի վրա կորյակների հայտնվելուց:

Ակրիդոֆոբիա՝ մարդը վախենում է չհասկանալ այն, ինչ կարդում է:

Ալեկտորոֆոբիա՝ վախ հավերից:

Ապոպատոֆոբիա՝ վախ գուգարաններից:

Աուլոֆոբիա՝ վախ ֆլեյտայից:

Գլոբոֆոբիա՝ վախ փուչիկներից:

Վենստրաֆոբիա՝ վախ գեղեցիկ կանացից:

Դեյպնոֆոբիա՝ վախ ուտելու ժամանակ խոսելուց:

Դարոֆոբիա՝ վախ նվեր ստանալուց կամ նվիրելուց:

Եվպոֆոբիա՝ վախ լավ լուրեր լսելուց:

Կոպրաստագոֆոբիա՝ վախ փորկապությունից:

Մետրոֆոբիա՝ վախ պոեզիայից:

Օպտոֆոբիա՝ վախ աչքերը բացելուց:

Պասիոֆոբիա՝ վախ թղթից:

Պասպոֆոբիա՝ վախ հոնի Պասպից:

Աստղերի կյանքն ու մահը



Մենք տեսնում ենք նրանց փայլը գիշերային երկնքում, բայց ի՞նչ է մեզ հայտնի աստղերի մասին, որ շողում են մեր գլխավերելում: Բեաթրիս Բարբյուն ուսումնասիրել է Կաթնօղակի բազմաթիվ աստղախմբեր ժամանակակից աստղադիտակների օգնությամբ, որոնք թույլ են տալիս ավելի խոր, քան առաջներում, սուզվել Տիեզերքի գաղտնարանները:

Այդ դիտակների թվին են պատկանում Հարլի աստղադիտակը եւ եվրոպական Հարավային Աստղադիտարանի Շատ Մեծ Աստղադիտակը: Աստղերի մեծ մասը, որոնք տեսանելի են անցում աչքով, գտնվում են մեզանից 10-100 լուսատարի հեռավորության վրա: Արեւից հետո մեզ ամենամոտ աստղը Ալֆա Կենտավրոսն է: Քանի որ նա գտնվում է մեզանից 4,3 լուսատարի հեռու, մենք տեսնում ենք նրան այնպիսին, ինչպիսին նա եղել է ավելի քան չորս տարի առաջ: Ժամանակակից աստղադիտակների օգնությամբ աստղագետները կարող են դիտել անցյալը, որը մի քանի միլիարդ տարեկան է, հետեւել հեռավոր գալակտիկաներին եւ իմանալ, թե ինչպիսին էին նրանք Մեծ Պայթյունից մի քանի միլիարդ տարի հետո:

Բրազիլիայի Սան-Պաուլու Համալսարանին կից աստղագիտության, երկրաֆիզիկայի ու մթնոլորտային գիտությունների ինստիտուտի պրոֆեսոր Բեաթրիս Բարբյուն դոկտորի աստիճան ունի, իսկ այս տարի արժանացավ «Լորեալ» ընկերության եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից համատեղ սահմանված մեզ 4 մրցանակներից մեկին՝ իր ուսումնասիրության համար, որը վերաբերում է աստղերի կյանքին՝ Տիեզերքում նրանց ծնվելու պահից մինչեւ մեր ժամանակները: Այս հարցազրույցում նա ինչ-ինչ գաղտնիքներ է բացում, մասնավորապես, պատմում է, թե ինչպես կարելի է որոշել աստղի մոտավոր տարիքը:

Ի՞նչ է մեզ հայտնի գալակտիկաների առաջացման մասին:

Մեծ Պայթյունը տեղի է ունեցել 13,7 միլիարդ տարի առաջ: Մեծ Պայթյունից երեք րոպե հետո առաջացան ջրածինը եւ հելիումը, եւ նրանց էլեկտրոնները վերամիավորվեցին իբրեւ չեզոք ատոմներ: Այդ պահից միայն, ձգողության ուժի ազդեցության ներքո, սկսեցին ձեւավորվել ուրվագծերն ապագա Տիեզերքի, որը շարունակում էր ընդլայնվել: Հավանաբար, սկզբում առաջացան հսկա աստղերը: Այդ աստղերից ամենառեզնակը, որ պայթել է 13 միլիարդ տարի առաջ, հայտնաբերվեց վերջերս Swift արբանյակի կողմից: Ապա ձեւավորվեցին փոքր գալակտիկաները, որոնք սկսեցին միավորվել՝ կազմավորելով ավելի մեծ գալակտիկաներ:


Այսօր մենք կարող ենք ստեղծել պարույրակերպ ու էլիպսաձեւ գալակտիկաների կազմավորման համակարգչային մոդելները:

Ինչպե՞ս է ծնվում աստղը եւ ինչու՞ է մեռնում:

Թեպետ Տիեզերքն ընդարձակվում է, աստղեր դեռեւս կարող են ձեւավորվել, քանի որ ձգողականության ուժը գլխավոր ուժն է գալակտիկաների խմբավորումների միջեւ ու հենց գալակտիկաների մեքսուր: Աստղերն հիմնականում ձեւավորվում են գազային ամպերի գրավիտացիոն սեղմման շնորհիվ:

Աստղը ծնվում է, երբ սկսում է ճեղքել ջրածինը, ապա այդ ջրածինը, այսպես կոչված միջուկային սինթեզի ընթացքում, վերածվում է հելիումի: Այդ փուլում նա համարվում է գաճաճ աստղ, ինչպես մեր Արեգակը:

Հսկա աստղերը մի քանի փուլ են անցնում՝ սկզբում այրելով ջրածինը, հետո՝ հելիումը, հետո՝ ածխածինը, ապա՝ նեոնը, իսկ հետո էլ՝ թթվածինը ու կրեմնիումը: Անցնելով միջուկային սինթեզի



այդ տարբեր փուլերը՝ աստղերը գտնվում են ատոմների միաձուլման անընդհատական վիճակում: Դա շարժման մեջ է դնում աստղին նրա ամբողջ կյանքի ընթացքում, եւ հասկանալի դարձնում ջերմության ու լույսի այն հսկայական քանակը, որը բխում է նրանից:

Մետաղական էլեմենտների ձեւավորումից հետո աստղի միջուկը շարունակում է սեղմվել մի քանի միլիոն տարի, քանի դեռ այդ գործընթացի հետեւանքով չի առաջացել գերխիտ նեյտրոնային աստղ կամ սեւ խոռոչ՝ աստղի զանգվածից կախված: Աստղային զանգվածի մեծացումը հատվածը դուրս կծայրի տարածություն՝ գերնոր աստղի պայթյունի տեսքով: Պայթյունից հետո կմնա միայն նեյտրոնային աստղը կամ սեւ խոռոչը: Նեյտրոնային աստղերը դժվար է տեսնել, դրանք շիկացած ու ամենախիտ մարմիններն են մեզ հայտնիներից: Դրանց տրամագիծն ընդամենը 16 կմ է, իսկ զանգվածով գերազանցում են մեր Արեգակին:

Աստղերը, որոնք ոչ մեծ զանգված ունեն, մեր Արեգակի նման, չեն անցնում այդ փուլերից շատերը եւ չեն պայթում: Ամենայն հավանականությամբ, նրանք ծնվում են, երբ նրանց միջուկում սկսում է այրվել ջրածինը: Ապա սկսում է այրվել հելիումը, հիմնականում՝ միջուկի շուրջը գտնվող կեղևում: Փոքր զանգված ունեցող աստղերն անցնում են մոլորակային միգամածության փուլի միջով որպես սպիտակ գաճաճ: Սկզբունքորեն եւ՝ նեյտրոնային

աստղերը, եւ՝ սպիտակ գաճաճներն ընդմիջտ իրենց աստղերի մնացորդները կլինեն:

Ինչի՞ց է կազմված եւ որտե՞ղ է գտնվում Արեգակը մեր սպիրալածեւ գալակտիկայում:

Արեգակը գտնվում է Կաթնօղակի կենտրոնից մոտավորապես 25 000 լուսատարի հեռավորության վրա եւ տեղավորված է արտաքին, ծայրամասային թելերից մեկում՝ Օրիոնի թևում: Արեգակն ամբողջովին կազմված է գազից: Ունի կենտրոնական միջուկով առանցք, եւ այդ առանցքը պարուրված է գազի մի քանի շերտով: Արտաքին շերտն արեգակային մթնոլորտն է, որը մենք տեսնում ենք: Արեգակնային մթնոլորտի զանգվածի 70 տոկոսը կազմում է ջրածինը, 28-ը՝ հելիումը եւ 2 տոկոսը՝ տարբեր մետաղներ: Ամենատարածված տարրը, ջրածինից ու հելիումից հետո, թթվածինն է, որի բաղկացությունն



ըր նրա մակերեսից կգոլորշանա: Մոտավորապես այդքան ժամանակ է տրված մարդուն, որպեսզի կարողանա տեղափոխվել այլ մոլորակ... Մոտավորապես 5 միլիարդ տարի հետո, երբ Արեգակը կդառնա կարմիր հսկա, նրա շառավիղը կընդարձակվի եւ նա կուլ կտա Երկիրը:

Որտեղի՞ց է մեզ հայտնի Արեգակի տարիքը:

Արեգակի տարիքը որոշվում է ռադիոակտիվ տարրերով, որոնք հայտնաբերվում են Երկրին հասած երկնաքարերի վրա: Աստղագետները չափում են այնպիսի տարրերի քանակն, ինչպիսին ուրանն է, համեմատելով այն ռադիոակտիվ քայքայման արդյունքների հետ: Ինչ վերաբերում է ուրանին, ապա նրա քայքայման արդյունքն արժեքն է: Տարիքի չափման համար օգտագործվող մյուս տարրերի շարքում են սամարիումը, ռուբիդիումը, ռենիումը եւ օսմիումը: Այդ երկնաքարերն առաջանում են Արեգակնային համակարգի այն ոլորտներում, որտեղ մատերիան տիեզերական թափոններից մոլորակ ստեղծելու ունակ չէ:

Բեկորները բախվում են իրար կազմավորելով ասուպային մարմին: Այն բանից հետո, երբ ասուպային մարմինը մտնում է Երկրի մթնոլորտ, մենք նրան անվանում ենք երկնաքար:

Ուրիշ ինչպե՞ս են որոշում աստղի տարիքը:

Աստղի տարիքի լավագույն ցուցիչը նրա մետաղայնությունն է: Երանում պարունակվող մետաղների քանակությունը շատ կարեւոր ինֆորմացիա է աստղերի տարիքը որոշելիս: Աստղագիտության մեջ «մետաղ» ասելով հասկանում են ջրածինից ու հելիումից ծանր բոլոր տարրերը, բայց խոսքն, ամենից առաջ, վերաբերում է երկաթին ու թթվածինին: Ջրածինն ու հելիումը այն միակ էլեմենտներն են, որոնք առատորեն առաջացան Մեծ Պայթյունի ժամանակ: Բոլոր ավելի ծանր էլեմենտները (մետաղները) հետագայում կազմավորվեցին աստղերի միջուկներում ընթացող միջուկային սինթեզի արդյունքում: Աստղերի յուրաքանչյուր մոր սերնդի հետ մետաղայնությունն այն գազի, որից ձեւավորվում են նոր աստղեր, աճում է:

Դուք առաջինն եք պայացուցել, այնպես չէ՞, որ մետաղի ցածր պարունակություն ունեցող աստղերը գալակտիկական գալոյում՝ գալակտիկայի

արտաքին արվարձանում, կազմավորվել են շատ վաղուց:

Ես չեմ բացահայտել այդ երեւույթը, բայց, հնարավոր է, ես առաջինն եմ հստակորեն ցուցանել դրա հետեւանքները. այսինքն՝ գալակտիկական գալոյի աստղերի, որոնք հայտնի են իբրեւ գալո-աստղեր, պարունակած թթվածնի առատությունը: Մեզ հայտնի է, որ գալակտիկական գալոյի մետաղի ցածր պարունակությամբ աստղերը մեծ քանակությամբ թթվածին են պարունակում, այդ թթվածինն զգալիորեն ավելի շատ է, քան մետաղները: Այստեղ հարկ է պարզաբանել, որ եթե աստղագետները խոսում են թթվածնի կամ որեւէ այլ էլեմենտի առատության մասին, ապա նկատի են եւ ունենում առատությունը՝ համեմատությամբ Արեգակի, որն օգտագործվում է իբրեւ ելման կետ:

Ի՞նչի մասին է վկայում այդ առատությունը: Շատ բանի, քանի որ թթվածնի ծավալը երկաթի համեմատությամբ աստղերի տարիքի երկրորդ մոտավոր ինդիկատորն է: Ձանգվածեղ աստղերը երկաթի ցածր եւ թթվածնի բարձր պարունակություն են ունենում: Երբ հսկա աստղերը պայթում են իբրեւ գերնոր աստղեր, նրանք թայթթում են իրենց մետաղները, հիմնականում՝ թթվածնի, մագնիումի, կրեմնիումի, կալցիումի եւ տիտանիումի էլեմենտները: Իսկ երկաթն ստացվում է հետո՝ ավելի փոքր զանգված ունեցող աստղերից: Ահա թե ինչու թթվածնով հարուստ այն աստղերը, որոնք առաջացել են առաջին հսկա աստղերից անմիջապես հետո, աչքի են ընկնում երկաթի համեղ թթվածնի բարձր համեմատականությամբ, ինչն էլ խոսում է նրանց մեծ տարիքի մասին: Եւ դա էլ հենց վերաբերում է գալակտիկական գալոյի աստղերին: Այսպիսով, գալո-աստղերը պիտի որ առաջացած լինեին շատ հեռավոր ժամանակներում, այն գազից, որն հարստացված էր հսկա աստղերի պայթյունի հետեւանքով:

Սակայն կան նաեւ աստղեր, որոնք գտնվում են հիմնավորց գալակտիկաների կենտրոնում եւ հարուստ են մետաղներով: Բանն այն է, որ աստղերի մի քանի սերունդներ այնտեղ կազմավորվում են շատ ավելի արագ, քան Տիեզերքի ուրիշ շրջաններում, շնորհիվ գազի մեծ ծավալի:

Գոյություն ունեն նաեւ այլ, աստղերի տարիքի որոշման ավելի ճշգրիտ միջոցներ:

>>>



Տիեզերական աղետի հետքերով

Ներկա պահին երկիրը միայն մեկ բնական արբանյակ ունի՝ Լուսինը: Սակայն, ոչ այնքան վաղուց՝ մոտ 6-7 հազար տարի առաջ երկնքում կարելի էր երկու Լուսին տեսնել: Այդ մասին խոսում են ոչ միայն շատ ժողովուրդների լեգենդները, այլև երկրաբանական հայտնագործությունները:

Մաքուր երկաթի բեկորներ

Արգենտինայի հյուսիսում է գտնվում Կամպո դել Սյելո շրջանը (թարգմանաբար՝ «երկնային դաշտ»): Այդ անվանումը վերցված է հին հնդկական լեգենդից, որում պատմվում է այստեղ երկնքից հանելուկային մետաղյա հսկայական բեկորների անկման մասին:

Երկաթի կտորները, հին իսպանական քրոնիկոնների համաձայն, այստեղ գտել են դեռ XVI դարում: Կոնկիստադորները դրանք օգտագործել են թրերի ու տեգերի պատրաստման համար: Հատկապես բերել է ոմն Էրման դե Սիրավալի բախտը, որը 1576 թ. բավական խուլ ճահճային մի վայրում մաքուր երկաթի մի ահռելի բեկորի է հանդիպել: Չեռներեց իսպանացին տարբեր առիթներով գտածոյից կտորներ էր պոկել-տարել: 1783 թ. գավառներից մեկի արեֆեկտը՝ դոն Ռուբին դե Սելիսը արշավանք կազմակերպեց դեպի այդ բեկորը եւ երկար որոնումներից հետո գտնելով այն՝ դրա զանգվածը գնահատեց մոտ 15 տոննա: Օբյեկտի մանրամասն նկարագրությունը չի պահպանվել, եւ այդ պահից այն ոչ ոք չի տեսել, թեեւ այդ բեկորը գտնելու փորձեր բազմիցս ձեռնարկվել են:

1803 թ. Կամպո դել Սյելոյի շրջակայքում մոտ մեկ տոննա քաշով երկնաքար հայտնաբերվեց: Դրա ամենամեծ հատվածը (635 կգ) 1813 թ. հասցրեցին Բուենոս-Այրես: Ավելի ուշ այն ձեռք բերեց անգլիացի սըր Բուդբայն Դերիշը եւ մվիրաբերեց Բրիտանական թանգարանին: Տիեզերական երկաթի այդ բեկորը մինչեւ հիմա էլ հանգչում է թանգարանի մուտքի մոտ: Դրա նակերեսի որոշ մասը հատուկ փայլեցված է, որպեսզի ցույց տրվի մետաղի կառուցվածքը, որը խոսում է դրա ոչ-երկրային ծագման մասին:

Կամպո դել Սյելոյում ու դրա շրջակայքում մինչեւ հիմա էլ մի քանի գրամից մինչեւ բազմաթիվ տոննաներ կշռող երկաթի կտորներ են գտնվում: Դրանցից ամենամեծի քաշը 33,4 տոննա է: Այն գտել են 1980 թ. Գանսեդո բնակավայրի մոտ: Երկնաքարերի ամերիկացի հետազոտող Ռոբերտ Չազը փորձեց գնել այն եւ տեղափոխել ԱՄՆ, բայց դրան խոչընդոտեցին արգենտինական իշխանությունները: Այսօր այդ երկնաքարը երկրորդն է իր մեծությամբ՝

Երկրի վրա հայտնաբերված բոլոր երկնաքարերից՝ այսպես կոչված Հոբի երկնաքարից հետո, որի քաշը մոտ 60 տոննա է:

Երկնաքարերի անսովոր մեծ թիվը՝ համեմատաբար ոչ մեծ տարածքում, խոսում է այն մասին, որ ինչ-որ ժամանակ այստեղ «երկնաքարերի անձրեւ է» տեղացել: Որպես դրա ապացույց, բացի երկաթե օբյեկտների հայտնագործումից, Կամպո դել Սյելոյի տարածքում խառնարանների մեծ թիվն է: Դրանցից ամենախոշորը Լագունա-Նեգրան է՝ 115 մ շառավղով եւ 5 մ խորությամբ:

Հսկայական երկնաքարը պայթել է մթնոլորտում

1961թ. Կամպո դել Սյելոյի գտածոներով հետաքրքրվեց Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր, աշխարհում երկնաքարերի ամենախոշոր մասնագետ Ու. Քեսիդին: Նրա կազմակերպած արշավախումբը մեծ թվով մանր մետաղյա երկնաքարեր հայտնաբերեց՝ հեկտադրիսներ, որոնք բաղկացած են քիմիական մաքուր երկաթից (96%-ը երկաթ է, մնացածը՝ միկել, կոբալտ, ֆոսֆոր եւ այլն): Նույն տարածքում տարբեր ժամանակներում հայտնաբերված մյուս երկնաքարերի ուսումնասիրությունը նույն բաղադրությունը ցույց տվեց: Գիտնականների կարծիքով, դա ապացուցում է, որ դրանք բոլորը մեկ երկնային մարմնի մասնիկներն են: Քեսիդին ուշադրություն հրավիրեց մի տարօրինակ փաստի վրա. սովորաբար մթնոլորտում խոշոր երկնաքարի պայթյունի ժամանակ դրա բեկորներն ընկնում են երկրի վրա՝ թափվելով էլիպսաձև՝ 1600 մ առավելագույն տրամագծով: Իսկ Կամպո դել Սյելոյում այդ տրամագծի երկարությունը 17 կմ է:

Քեսիդին ուսումնասիրությունների նախնական եզրակացությունները հետաքրքրություն առաջացրին ամբողջ աշխարհում: Գիտնականին միացան հարյուրավոր կամավորներ, եւ արդյունքում երկնաքարային երկաթի մասնիկներ հայտնաբերվեցին նույնիսկ Կամպո դել Սյելոյից զգալի հեռավորության վրա՝ մինչեւ Խաղաղ օվկիանոսի ափը:

Արբանյակ - 2

Պարզվեց, սակայն, որ գտածոներն ավելի լայնածավալ տարածքում են սփռված: Կամպո դել Սյելոյի երկնաքարի պատմության վրա անսպասելի լույս սփռեց Ավստրալիայում տեղի ունեցած բացահայտումը: Այստեղ դեռ 1937 թ. Հենրի Բարդի քաղաքից 300 կմ հեռավորության վրա, 175 մ շառավղով եւ 8 մ խորության հնագույն խառնարանում 82 կգ քաշով երկաթե երկնաքար գտան եւ ավելի փոքր քաշի մի քանի բեկոր: 1969 թ. դրանց բաղադրու-



թյան ուսումնասիրություն անցկացվեց, որը ցույց տվեց դրանց ու Կամպո դել Սյելոյի երկնաքարերի նույնականությունը:

Հենրի Բարդի խառնարանները հայտնի են դեռ նախորդ դարի 20-ականներից: Դրանք մի քանի տասնյակ են, ամենախոշորը հասնում է 200 մ-ի, մյուսները համեմատաբար փոքր են՝ 9-ից 18 մ: 30-ականներին այստեղ անցկացված պեղումների ժամանակ երկնաքարային երկաթի ավելի քան 800 բեկոր է հայտնաբերվել, այդ թվում՝ 200 կիլոգրամանոց խոշոր կտորի մոտ չորս բեկոր:

Քեսիդին հանգեց եզրակացության. ահռելի մեծության երկնաքար է ընկել երկրի վրա, բայց ոչ հանկարծակի: Իր ընկնելուց որոշ ժամանակ առաջ երկնային մարմինը պտտվել է երկրի շուրջն էլիպսաձև ուղեծրով՝ աստիճանաբար մոտենալով մոլորակին:

Ուղեծրում գտնվելը կարող էր երկար տևել՝ հազարից ավելի տարի: Սակայն երկրի ձգողական ուժի ազդեցության տակ երկրորդ Լուսինը, վերջ էլ վերջո, այնքան է մոտեցել երկրին, որ անցել է այսպես կոչված Ռոշերի սահմանը, որից հետո մտել է մթնոլորտ եւ տարբեր մեծության բեկորների բաժանվել, որոնք էլ ընկել են մոլորակի մակերևույթին:

Հին աղետի արձագանքներ

Աղետի մոտավոր տարեթիվը հնարավոր եղավ որոշել ռադիոածխածնային հետազոտության միջոցով: Ըստ արդյունքների՝ այն տեղի է ունեցել մոտ 5800 տարի առաջ: Այդպես աղետը մնացել է մարդկության հիշողության մեջ, քանի որ այդ ժամանակ ձեւավորվում էին հին քաղաքակրթությունները, որոնք իրենցից հետո գրավոր հուշարձաններ են թողել: Դրանցում էլ մենք գտնում ենք առասպելականացված հիշատակումներ մոլորակի երկրորդ բնա-

կան արբանյակի եւ դրա անկման առաջացրած աղետի մասին:

Օրինակ, Շումերի կավե սալիկներում նկարագրվում է Ինանա աստվածուհին, որն անցել է երկնքով՝ սարսափեցնող փայլատակուններով: Նույն իրադարձությունների արձագանքն է, հավանաբար, հին հունական առասպելը Ֆաետոնի մասին:

Փայլատակող երկնային մարմնի մասին հիշատակում են բաբելոնյան, եգիպտական, հին սկանդինավյան աղբյուրները, Օկեանիայի ժողովուրդների առասպելները: Անգլիացի ազգագրագետ Ջ. Ֆրեզերը նշում է, որ Կենտրոնական եւ Հարավային Ամերիկայի բոլոր 130 հնդկական ցեղերի առասպելներում էլ արտացոլված է այդ թեման:

- Այստեղ ոչ մի գարնանալի բան չկա, - գրում է ամերիկացի աստղագետ Մ. Փափերը, - չէ՞ որ, մետաղյա երկնաքարերը լավ են երեւում թռչելիս: Արտացոլելով արեւի լույսը, դրանք ավելի պայծառ են շողում, քան քարե օբյեկտները: Իսկ ինչ վերաբերում է մաքուր երկաթից խոշոր բոլիդին, ապա դրա լուսարձակումը գիշերային երկնքում իր պայծառությամբ պետք է որ գերազանցեր Լուսնին:

Էլիպսաձև ուղեծրը, որով շարժվում էր բոլիդը, ենթադրում էր, որ ժամանակ առ ժամանակ այն երկրին շատ մոտ տարածության վրա է անցնելու: Երկնաքարը շփվում էր մթնոլորտի բարձր շերտերի հետ ու այնքան շիկանում, որ դրա փայլը պետք է որ տեսանելի լիներ նույնիսկ ցերեկը: Երբ այդ օբյեկտը մոտենում էր երկրին, դրա լուսարձակումն ուժեղանում էր՝ մարդկանց մեջ առաջացնելով ահ ու սարսափ: Մ. Փափերի կարծիքով, ուղեծրը, որն ստիպում էր բոլիդին մեկ շիկանալ երկրի մթնոլորտի հետ շփվելով, մեկ հեռանալ ու նորից սառել տիեզերական սառնամանիքներում, դրա մասնատման պատճառ է հանդիսացել:

«« Կարելի է օգտագործել սպեկտրոսկոպիան՝ չափագրելու համար այնպիսի ռադիոակտիվ էլեմենտներ, ինչպիսիք են թորիումը եւ ուրանը: Բացահայտելով այդ ռադիոակտիվ էլեմենտների քանակը եւ նրանց հնարավոր սկզբնական ծավալն աստղերի կազմավորման պահին, մենք կարող ենք եզրակացություն անել, թե որքանով է այդ էլեմենտի քանակությունը նվազել ռադիոակտիվության պատճառով, իսկ հետո այդ ցուցանիշից դուրս բերել աստղի տարիքը: Լավագույն եւ առավել տարածված մեթոդը միենույն խմբա-

վորման մեջ գտնվող աստղերի պայծառության դիտարկումն է: Մի եւ նույն աստղերը չափվում են ըստ երկու գույնի. տեսանելի եւ ինֆրակարմիր շողարձակման: Առաջին դիտարկման ժամանակ գտիչը բաց է թողնում միայն տեսանելի լույսը, իսկ երկրորդ դիտարկման ժամանակ՝ միայն ինֆրակարմիր շողարձակումը: Պայծառության տարբերությունը պատկերվում է գրաֆիկի տեսքով, որը կարելի է հետո համեմատել այն մանրամասն հաշվարկների հետ, որտեղ նույն գրաֆիկի մեջ տեղադրված են զանգվածների փոքր տարբերություն ունեցող աստղերը: Աստղային խմբավորումների մեջ գտնվող աստղերի

պայծառության դասակարգմամբ մենք կարող ենք որոշել վերջինի տարիքը: Ինչու՞ են հիմնավորապես աստղերը խմբավորումներ կազմավորում: Բոլոր աստղերը ծնվում են գազային ամպերում: Աստիճանաբար այդ գազային ամպերում ձեւավորվում են աստղախմբեր: Այդպիսի խմբերում կարող է լինել ընդամենը մի քանի աստղ, եթե գազային ամպը փոքր է, կամ էլ նրանք կարող են կազմավորել այսպես կոչված գնդային խմբավորումներ, եթե այդ ամպերի զանգվածը մեկ միլիոն անգամ ավելի մեծ է, քան մեր Արեգակինը: Գազային այդ ամպերը բնորոշ

են երիտասարդ գալակտիկաներին, բայց ժամանակի հետ, երբ առաջանում են ավելի ու ավելի շատ աստղեր, գազի ծավալն աստիճանաբար փոքրանում է: Մեր գալակտիկայում արդեն չկան գազային ամպեր, որոնց զանգվածը կարողանար գերազանցել մեր Արեգակին միլիոն կամ ավելի շատ անգամ: Դա նշանակում է, որ հիմնավորապես գնդային խմբավորումները, որոնք մենք կարող ենք դիտարկել մեր գալակտիկայում, կազմավորվել են հեռավոր անցյալում, երբ Ծիր Կաթինը լցված էր գազերով, որոնցից ծնվում էին աստղերը: Սակայն անկանոն կերպեր ունեցող գազած գալակտիկաները, օրինակ՝ Մագելանի Ա-

Հարցազրույցը գրառեց Սյուզան Շենեգանսը
Բնական գիտությունների վերաբերյալ քառամսյակի տեղեկատվական #4 բյուլետեն, ՅՈՒՆԵՍԿՕ



Բնապահպանություն

Քայլ հեպ

Քենիայի «Մալինդի-Բատամու» եւ Մեծ Բրիտանիայի «Բրոնթոն-Բերոուզ-Յյուսիսային Դեվոն» կենսոլորտային արգելանոցների միջև ընդհանրությունները շատ են: Անկախ այն հանգամանքից, որ նրանց բաժանում է հազարավոր կիլոմետրերի հսկայական մի տարածություն, նրանք ընդհանուր խնդիրներ ունեն:

Երկուսն էլ դժվարին պայքար են մղում բնական տարերքների դեմ, թեպետ քենիական արգելանոցը տեղակայված է ափի երկայնքով՝ մարջանախութերի, ավազե լողափերի ու մանգրայի թփուտների հարեամուտքայանք, իսկ բրիտանական արգելանոցը գտնվում է ճահճային տեղանքում, շրջապատված ավազաբլուրներով՝ ոչ հեռու սերֆինգի սիրահարների շրջանում մեծ համարում ունեցող ափից: Բանն այն է, որ ջրի մակարդակը համաշխարհային օվկիանոսում անընդհատ աճում է, եւ հողի երզոհան լուրջ վտանգ է ներկայացնում տնտեսության համար, քանի որ կարող է տեղի բնակչությանը զրկել ապրուստի միջոցներից: Զբոսաշրջիկներին գրավող վայրի բնությանը եւ տեսարժան մերձափերին սպառնում են ոչ միայն բնական երեւոյթները, այլև չկշռադատված կառուցապատումը: Անցյալ տարի Մալինդի-Բատամուի եւ Յյուսիսային Դեվոնի համայնքները որոշեցին փորձ իրականացնել: Սերտ կատար հաստատելով՝ նրանք հույս ունեն իրարից սովորելու, թե ինչպես ավելի լավ հարմարվեն փոփոխվող աշխարհին:

Ջրի մակարդակը համաշխարհային օվկիանոսում բարձրանում է: Կանգնեցնել այդ երեւոյթը հնարավոր չի համարում, սակայն դա հենց այն է, ինչն իրականացնելու հույսն ունեն Յյուսիսային Դեվոնի բնակիչները Մեծ Բրիտանիայում: Այստեղ անցկացված հետազոտությունները վկայում են, որ ծովի ջրի մակարդակի բարձրացման հետեւանքով առաջիկա 20 տարում մերձափնյա ծովահատակի կարելու բնակության միջավայրի 20 տոկոսի կորուստն իրապես առկա վտանգ է: Հարկավոր կլինի վերականգնել աղի ճահիճները, որովհետեւ դրանք կարելու պաշտպանություն են հանդիսանում ընդդեմ ջրածածկման: Եթե ալիքները հետ մղող պատվարներին հարում են աղի ճահիճներ, ապա այդ պատերը չափազանց զանգվածեղ անելու անհրաժեշտությունը չկա, քանի որ աղի ճահիճը փաստորեն մակընթացության ալիքին, որը ճնշում է գործարդում պաշտպանական կառույցների վրա, զրկում է էներգիայից:

Յյուսիսային Դեվոնի կենսոլորտային արգելանոցի անձնակազմը, պրոֆեսորներ Ջոն Պետրիկի եւ Ջուլիան Օրֆորդի հետ համատեղ, փորձ են արել կանխատեսելու, թե ինչպիսի փոփոխություններ կարող են տեղի ունենալ գետի գետաբերանի եւ նրա ափերի հետ առաջիկա 100 տարվա ընթացքում: Տեղի բնակիչները նույնպես մասնակցեցին այդ աշխատանքներին, որպեսզի գիտնականներին փոխանցեն իրենց գործնական գիտելիքներն ու դիտողությունները: Փորձի արդյունքները մեծ տազնապ առաջացրեցին: Դրանք մարտահարվել են տեղից ափամերձ տարածքի ձեւավորման ընդունված տեսություններին՝ կասկածի տակ դնելով ծագող հիմնախնդիրների պատճառներն ու դրանց գործնական լուծման միջոցները: Հետազոտությունը ցույց տվեց, որ ափամերձ տարածքն, ամենայն հավանականությամբ, արմատական փոփոխությունների է ենթարկվել:

Ընդամենը մեկ եզրակացություն կարելի է անել. ակնհայտ է, որ հասել է դեպի հետքայլ անելու ժամանակը, Յյուսիսային Դեվոնի ափամերձ տարածքի ամբողջ երկայնքով բնական գործընթացներին չխոչընդոտելու ժամանակը:

Խորպակվող գյուղատնտեսական անդաստիարակներ

Յյուսիսային Դեվոնի Թոն եւ Թորիջ գետերի գետաբերանը կառուցապատված է տարածքի ամբողջ տրամագծով, իսկ պաշտպանական պարիսպների ներսում գտնվող հողն օգտագործվում է գյուղատնտեսական նպատակներով, ինչը սկզբունքորեն բնորոշ է շատ գետերի գետաբերանների համար:

Ջրածածկվող ափերի առջեւում տարածվում է օրինակելի մի միջավայր աղի ճահիճների գոյության համար, եւ առաջանում է նոր մի ափ, որը ողողվում է մակընթացության ու մերկանում՝ տեղատվության ժամանակ: Այստեղ մենք ունենք դասական օրինակը՝ «մերձափնյա շերտի ճգնման», երբ պաշտպանական պարիսպների առջեւում գտնվող առափնյա ծովահատակի շրջանը սեղմվում է ջրի մակարդակի բարձրացման պատճառով: Այդ գոտում բազմաթիվ ձկնաբուծարաններ կան ու նաեւ սարքավորումներ, որոնք փոխակերպում են ալիքների էներգիան: Դրանց կորուստն իր հետ մեծ վնասներ կբերի, եւ ամբողջ ունեցվածքը կհայտնվի վտանգի տակ:

Կենսոլորտային արգելանոցի անձնակազմն արդեն իսկ սկսել է վերականգնել աղի ճահիճներից մի քանիսը: Թեպետ դրա հետեւանքով գյուղատնտեսական անդաստիարակները ջրածածկվեցին գետերի ափերին, ծրագրից բուռն բողբոջների տեղիք չտվեց: Սակայն գետաբերանի մի մասը ծովին համընկելու առաջարկը համաժողովրդական գայությանի ալիք բարձրացրեց:

«Հանձնել» քարերի թմբաշարքը

Գետաբերանի հարավային կողմը պաշտպանված է գորշ, հղկված գետաքարերի հսկա թմբաշարքով: Վերջին տարիներին, երբ ծովը փոթորկվում էր մակընթացությունների ժամանակ, ալիքներն արագորեն տեղաշարժում էին քարերը որոշ տեղերում՝ քարե թմբաշարքի մեջ ճեղքվածքներ առաջացնելով: Ալիքները նաեւ սկսել էին ողողել ափամերձ ավազաբլուրները: Անցյալում քաղաքային խորհուրդը վերանորոգել էր թմբաշարքը՝ ծանր տեխնիկայի օգնությամբ տեղափոխված քարերն իրենց տեղը դնելով: Սակայն վերջին տարիներին ստիպված էին հրաժարվել այդ ծախսատար քաղաքականությունից եւ թույլ տալ, որ ծովը ջրի ծածկի տակ առնի Նորթեմ Բերոուզ անունով հայտնի հողատարածքը: Տեղական խորհրդի անդամ Էնդրյու Իսթմենը դեմ է ցնամ քաղաքականությանը, եւ նրա կարծիքին համաձայն են այդ տեղանքի շատուշատ բորբոքված բնակիչները: «Սեզ հարկավոր է վերականգնել քարե թմբաշարքը, - ասում է Իսթմենը, - այդպիսով չենք թողնի, որ ջուրը խորտակի ափը, նաեւ ավելի շատ ժամանակ կաշինք»:

Սակայն դա թանկագին որոշում է, ու ոչնչով չի օգնի, եթե ջրի մակարդակը ծովում այսուհետեւ էլ շարունակի բարձրանալ:

Ալիքնայտորեն դա է վկայում առաջիկա 100 տարվա ընթացքում իրադրության հետագա զարգացման մոդելը, որը հիմնված է մետեորոլոգիական լազերային լոկատորի (LiDAR) տվյալների վրա, դրա մասին են խոսում նաեւ գեոմորֆոլոգիական այլ ցուցիչներ, ինչպիսիք են փոքր-ինչ բարձրացած հիմնավոր ափերը, որոնք մնացել են միջսառցակալման դարաշրջանից, երբ ծովի ջրի մակարդակն անհամեմատ ավելի բարձր էր, քան հիմա: Տեղացի երկրաբան Փիթեր Քինի խոսքերով՝ անցյալում Նորթեմ Բերոուզն անհայտացել է բազմիցս - 125 000 տարի առաջ ծովում ջրի մակարդակը 8 մետրով ավելի բարձր է եղել, ապագայում նույնպես կբարձրանա: Քարե թմբաշարքի վերացման հետեւանքով առաջանալիք կորուստներից մեկը կարող է լինել գոլֆի տեղական դաշտը՝ ի ափսոսանք այդ խաղի տեղացի սիրահարների: Անսպասելի կենսոլոր-



տային արգելանոցի աշխատակիցների խորհրդին՝ գոլֆ-ակումբն սկսել է փոխել գոլֆի հրապարակի ուղվագծերը, որպեսզի հեռացնի այն օրեցօր մոտեցող ծովից:

Հարկավոր է սրիպել մարդկանց՝ մրաժել գլխով

Ջարգացած երկրում ապրող շատերի համար «կլիմայի փոփոխություն» արտահայտությունը զուգորդվում է անապատացման հետ՝ ինչ-որ տեղ՝ Սահարայում, կամ հիշեցնում է Հնդկաստանում մոլեզնող մուսոնները: Նրանց թվում է, թե կլիմայի փոփոխության ամենալուրջ հետեւանքները չափազանց հեռու են իրենցից, եւ թե այդ փոփոխություններն այնքան դանդաղ են զարգանում, որ չեն կարող անմիջապես տեսնվել այն տարածքներին, որտեղ իրենք են բնակվում:

Դյուրին գործ չէ այդ մարդկանց գիտակցությանը հասցնել այն ճշմարտությունը, որ եթե նույնիսկ ջրի մակարդակը ծովում բարձրանա տարիի 2,5 մմ, ապա դա կարող է լրջագույն հետեւանքներ ունենալ արդեն մոտ ապագայում:

Երբ բանը հասնում է հիմնարար որոշումներ կայացնելուն, ասենք՝ զիջել ծովին ցամաքի մի հատվածը, թե՛ ոչ, մարդկանց արձագանքը հաճախ զգացմունքային է լինում, մարդիկ ավելի շատ մտածում են սրտով, քան խելով: Եթե տեղի ունեցող բնական երեւոյթների հետեւանքները դուրս բերվեն ներկա սերնդի կյանքի ժամանակային շրջանակներից, ապա դա մարդկանց հնարավորություն կտա առավել ազատորեն մշակելու այնպիսի մի ռազմավարություն, որն ըստ արժանվույն կգնահատեն նրանց ավակներն ու թոռները:

Տպավորությունն այնպիսին է, որ երիտասարդներին ավելի շատ մտահոգում է, թե ինչ է սպասում իրենց մոտ ապագայում: Բիդեֆորդյան քոլեջի սովորողներն սկսել են իրականացնել մի ծրագիր, որի նպատակը ծովափի եւ գետաքարերի շարքի շրջանում ջրի մակարդակի բարձրացումը հաշվարկելն է: Նրանք լուսանկարներ են անում եւ համացանցում արդեն բացել են սեփական մի կայք, որն անվանել են «Մեծ կլիմայական շարժ», որպեսզի հանրությանը տեղեկացնեն տեղի ունեցող փոփոխությունների զարգացման մասին: Ծրագիրը «բացեց իմ աչքերը, եւ տեսա, - ասում է դեռահաս Սոֆիյա Բոսվորթը, որը սովորում է Բիդեֆորդյան քոլեջում, - թե ինչ ազդեցություն է թողնում կլիմայի փոփոխությունը մեր տեղանքի վրա: Այդ փոփոխություններն առաջին հերթին անդրադառնում են գետին ու ափերին: Մենք նայում ենք քարաշարքին եւ տեսնում, թե նա ինչպես է նահանջում, ինչպես է ծովը ետ հրում նրան եւ զգալի փոփոխությունների ենթարկում հողատարածքները»:

Դժբախտություն՝ դրախտում

Միեւնույն ժամանակ Քենիայում գտնվող Մալինդի-Բատամուի արեւադարձային կենսոլորտային արգելանոցում ամբողջ ուշադրությունը սեւեռված է մանգրայի թփուտներին ու լողափերին: Այդ արգելանոցում

ափագծի ոլորանները, որոնք ծածկված են փարթամորեն աճած մանգրայի անտառներով, կատարում են նույն դերն, ինչ աղի ճահիճները Յյուսիսային Դեվոնի չափավոր եղանակային պայմաններում. այնտեղ ստեղծված են բազում ձկնաբուծարաններ ու ալիքային էներգետիկական սարքավորումներ: Սաբակի գետը ծովն է թափվում ափի հենց այդ հատվածում, բայց իր հետ բերում է նստվածքային ապարների մեծ մի շերտ, որն, ի վերջո, խեղդում ու կործանում է ծովի մարջանները: Բացի դրանից, բարձրանում է ջրի ջերմաստիճանը ծովում, եւ տեղի է ունենում օվկիանոսի ջրերի թթվայնացում:

Ծովում ջրի մակարդակի բարձրացումը, մերձափի երկայնքով մեկ տարածված քաղցրահամ ջրի հնարավոր հավելուրդային ցանկապատի հետ համատեղվելով, բերում է այդ ջրապատմեջային բացվածքների աղիացման, որի պատճառը ծովի ջրի սուղակումն է ծակուտկեն կրաքարի միջով:

Երկկողմ հարձակում ցամաքի վրա

Քենիայում գործում է օրենք, որը պահանջում է 30-մետրանոց առափնյա շերտը ավելի բարձր, քան ջրի մակարդակի բարձրացման առավելագույն միջինը, Ֆլորայի եւ ֆաունայի պաշտպանության միտումներով: Հենց այդ նույն գոտում էլ ծովային կրիաները կառուցում են իրենց բները: Առափնյա շերտը նաեւ Հնդկական օվկիանոսում մոլեզնող մուսոնային փոթորիկների լավագույն մեղմացուցիչն է:

Սակայն մենք վկայեցինք երբ ջրերի ջրածածկման, ինչը հետեւանք է ծովում ջրի մակարդակի բարձրացման եւ այդ տարածքում իրականացվող անօրինական կառուցապատումներին, որն ավելի ու ավելի է ծավալվում եւ չի կարող տազնապ առաջացնել: Այսպիսով, հարձակումն առափնյա շերտի վրա իրականացվում է երկու կողմից: Սթիվ Թորթը, Բատամուի Ծովային ընկերակցության նախագահը, նշում է, որ Բատամուի Ծովային պուրակի, որը Քենիայում ծովային կրիաների բնադրման գլխավոր տեղանքներից մեկն է, առափնյա շերտի ավերումը հատկապես արագ է ընթանում 2004 թվականից սկսած: «Այժմ կրիաները ստիպված բնադրում են առափի այն նեղացող հատվածում, որը ենթակա է ջրածածկման, - ասում է նա: - Անընդհատական վտանգ կա, որ ծովը կքշի-կտանի կրիաների բները եւ կկործանի դրանք»:

Ինչպես եւ Մեծ Բրիտանիայում, զգացմունքները ելնում են ափերից, երբ բանը հասնում է ափամերձ շրջանի եւ վայրի բնության պաշտպանությանը: «Մալինդի-Բատամու» կենսոլորտային արգելանոցի կազմակերպությունը համախմբել է ջանքերը «Բատամու» Ծովային ընկերակցության հետ, որպեսզի ապահովի 30-մետրանոց առափնյա շերտի պաշտպանության մասին օրենքի կատարումը: Ընկերակցությունն արդեն շահել է դատը Պետական էկոլոգիական դատարանում եւ հասել այն բանին, որ չեղյալ հայտարարվեն Երկնագույն Սարջանալունը >>>



Ա՛հ հանրագիտարան

Եղանակի մահացու թակարդները

2010 թ. հունիսը՝ օդերևութաբանական դիտարկումների պատմության մեջ համարվեց ամենաշոգ ամիսը Երկրի վրա: Եղանակային անոմալ փոփոխությունները գլոբալ տաքացման անմիջական հետևանք են համարվում, բայց ջերմաստիճանի տատանումներն ու դրանից առաջացած տարբեր արտակարգ իրավիճակները նորություն չեն մեր բազմաշարժար մոլորակի համար:

Չոր մահը

Որպես կանոն, երաշտները մոտենում են շատ աննկատ՝ առանց սարսափելի նախանշանների: Թվում է՝ ոչինչ գերբնական տեղի չի ունենում, պարզապես երկար ժամանակ չի անձրեւում: Սակայն անձրեւների բացակայությունը բաղաձայն է սպանել հազարավոր մարդկանց:

Այդպիսի մի իրավիճակ էր ստեղծվել 1959 թվականի սկզբին Բրազիլիայում: Երկրի որոշ շրջաններում յոթ տարի շարունակ անձրեւներ չէին տեղացել: Քաղցած գյուղացիները հեղեղեցին քաղաքների փողոցները: Սարսափած վաճառականները փակում էին խանութների դռները: Քաղաքի բնակիչները վախենում էին դուրս գալ տներից: Քաղցած, անօթեւան մարդիկ մահանում էին հենց փողոցներում: Ֆորտալեգա քաղաքում միայն մեկ շաբաթվա ընթացքում մահացավ չորս հարյուր երեխա:

Այրված ԱՄՆ-ը

1980 թվականի հունիսի վերջին ԱՄՆ-ում չտեսնված շոգ եղանակ էր տիրում: Շատ շրջաններում ջերմաստիճանը հասել էր +40-ի: Ցանքատարածություններն ամբողջովին այրվել էին, ջրամբարները՝ չորացել, անատունները սատկում էին հենց արոտավայրերում: Մեկը մյուսի հետեւից հորդեհներ էին բռնկվում:

Սեպտեմբերի սկզբին շոգն ի վերջո նահանջեց: Բայց մինչ այդ Տեխասի հարավից Դակոտայի հյուսիս ձգվող հսկայական տարածության դաշտերից եւ արոտավայրերից միայն այրված հող էր մնացել: Հատկապես շատ էին տուժել Արկանզասի, Տեխասի եւ

Ֆլորիդայի թռչնաբուծարանները: Միայն Արկանզասում մեկ շաբաթվա ընթացքում սատկել էր ութ միլիոն թռչուն:

Քաղաքներում շոգից հիմնականում մահանում էին տարեցները: Մարդկանց քարտեզներն արեւի ճառագայթների տակ վերածվել էին շիկացած վառարանների: Շոգ եղանակից մահացավ 1265 մարդ:

Կարկուտ Մյունխենում

1984 թվականի հունիսի 12-ին Մյունխենի վրա թափվեց ուժեղագույն կարկուտ, որը թողեց ավերածությունների 25 կիլոմետրանոց հետք: Մոտ քսան ռուպեի ընթացքում հավիկի չափի հասնող կարկուտը ոչնչացրեց դաշտերի բերքը, փշրեց հազարավոր պատուհանների ապակիներ, վնասեց անտառների ծառերը:

Այդ պահին շատերը գտնվում էին գարեջրատներում: Վախեցած այցելուները փորձում էին թաքնվել սեղանների տակ: Արվեստի տան ապակյա տանիքը փլվեց ցուցասրահներում գտնվող մարդկանց վրա: Օդանավակայանում հետաձգվեց 22 չվերթ:

Տարերքի պատճառով վնասի հետեւանքով ապահովագրական ընկերություններն ստիպված էին վճարել ավելի քան մեկ ու կես միլիոն մարկ: Իսկ վնասի ընդհանուր չափը գերազանցել էր երեք միլիարդ մարկը: Վնասվել էր 24 հազար ավտոմեքենա: Դրանց թվում էր նաեւ մի հրատարակչի ավտոմեքենա, որի տերը, տեսնելով մոտեցող ամպերը, մեքենան հատուկ դուրս էր հանել ավտոտնակից՝ անձրեւի ջրով այն վաճառելու եւ մի քիչ գումար տնտեսելու համար:

Սառցե թակարդ

Քաշմիրի Սրինգար եւ Լեխ բնակավայրերն իրար է միացնում 400 կիլոմետր երկարությամբ լեռնային մի ճանապարհ: Շատ տեղերում ճանապարհը, որի լայնությունը չի գերազանցում վեց մետրը, բախվում է զառիթափ ժայռերի: Ավտոբուսները եւ բեռնատարները կարող են անցնել ճանապարհի միայն մեկ կողմով: Այդ իսկ պատճառով զինվորները փակում են ճանապարհը եւ մեկ ուղղությամբ բաց թողնում մի քանի հարյուր բեռնատար: Հետդարձի ճանապարհ չկա: Երբ սրանք հասնում են ճանապարհի վերջում գտնվող պահակակետին, զինվորները մեքենաների հաջորդ շարքն են բաց թողնում՝ այս անգամ հակառակ ուղ-

ղությամբ: Այսպես է տեղի ունենում Սրինգարի եւ Լեխի միջև երթևեկությունը:

1986 թվականի հոկտեմբերին 350 բեռնատարից բաղկացած շարասյան վրա հանկարծ ձյան ուժեղ փոթորիկ թափվեց: Մի քանի ռուպեից մայրուղին վերածվեց սառցե թակարդի: Մեքենաների մի մասն ընկավ անդունդը, մյուս մասը մնաց ձնահյուսների տակ: Յոթամասուն մարդ որոշեց ձյան միջով հասնել պահակակետին: Նրանցից տեղ հասան միայն 16-ը: Ավելի քան հազարը զոհ գնացին ցրտին եւ սովին:

Ձնամրրիկ Նյու Յորքում

1988 թվականի մարտի տաք օդերևութաբանական կայանի աշխատակիցների համար սովորական աշխատանքային օր էր: Ոչինչ չէր վկայում հնարավոր վատ եղանակի մասին, եւ նախօրեին բոլորը հանգիստ գնացին տուն: Ոչ ոքի մտքով չէր կարող անցնել, որ այդ պահին Դելավեր նահանգի ափերի մոտ իսկական մթնոլորտային ողբերգություն է սկսվել: Սառը եւ տաք ցիկլոնների հանդիպման հետեւանքով առաջացավ ուժեղ փոթորիկ, որն էլ ուղեւորվեց հյուսիս-արեւելք: Այն անցավ Չեսապիկի ծոցով՝ խորտակելով այնտեղ եղած բոլոր նավերը:

Ջերմաստիճանը հետզհետե նվազում էր, եւ հյուսիսի վրա ձյան հսկայական փոթորիկ թափվեց: Մոտեցող վտանգի մասին նախագուշացումը Նյու Յորքում չստացան, քանի որ հեռագրասյուները տապալվել էին ուժեղ քամու հետեւանքով: Չյան առատ տեղումները Նյու Յորքի բնակիչների համար արտասովոր երեւոյթ չէին, ուստի ջերմաստիճանի նվազումը հանգիստ ընդունվեց: Եղանակին համապատասխան հազմվելով վաղ առավոտյան Եյուլորքցիներն շտապեցին աշխատանքի: Նրանք, ովքեր շատ վաղ էին արթնացել, դեռ հասցրել էին օգտվել երկաթգծից: Սակայն ժամ առ ժամ իրավիճակն ավելի էր վատթարանում: Կայարաններից մեկում առատ ձյան հետեւանքով իրար բախվեցին երկու զնացք, կային զոհեր եւ վիրավորներ: Որոշ ժամանակ անց գծերի անանցանելիության պատճառով կանգ առան բոլոր զնացքները: Մոտ 15 հազար մարդ հայտնվեց գերբեռնված, չջեռուցվող թակարդ-վազաններում: Որոշ հնարամիտներ լավ վաստակ ունեցան այդ օրը: Նրանք սանդուղքներով մոտենում էին ձյան մեջ թաղված զնացքներ-

րին եւ վագոնից սանդուղքով իջած յուրաքանչյուր ուղեւորից երկու դուրս գանձում մատուցած ծառայության դիմաց: Գործարաններում եւ գրասենյակներում ոչ ոք չկար, աշխատողներին եւ ծառայողներին ծյունը խանգարել էր հասնել աշխատավայր: Ուղղ սթրիթի բորսայի 1100 բրոքերներից աշխատանքի էին եկել միայն երեսունը: Իր պատմության մեջ առաջին անգամ բորսան փակել էր դռները: Հյուսիսային շրջանները լեփ-լեցուն էին, մարդիկ քնում էին նույնիսկ միջանցքներում: Օրը հաջող անցավ միայն բազմաթիվ բարերի տերերի համար: Տաքանալու համար այստեղ էին մտնում նրանք, ում վատ եղանակը թույլ չտվեց հասնել տուն:

Չնամրրիկը խլեց 400 մարդու կյանք, նրանց մոտ կեսը Նյու Յորքի բնակիչ էր: Չյան հալոցքից հետո դեռ մի քանի շաբաթ քաղաքի փողոցներում սառած դիակներ էին հայտնաբերվում:

Մեքենան լվացե՛լ ես, փուզանք

1990 թվականին Անգլիայում սարսափելի շոգ եղանակ էր հաստատվել: Երկրի արեւմուտքում ջերմաստիճանը բարձրացել էր մինչեւ +38: Սովորական անգլիական եղանակի համար, որի վրա մեծ ազդեցություն է գործում օվկիանոսը, դա չափազանց բարձր ցուցանիշ է: Շոգից իսկզմանց անգամ Բիզ Բենի սլաքները, իսկ ճանապարհների ասֆալտն սկսեց հալել:

1990-ի ամառն անտանելի շոգ էր նաեւ Եվրոպայի մյուս երկրների համար: Հունաստանում հարյուր տարվա մեջ առաջին անգամ զգացվեց խմելու ջրի պակաս: Ամենուրեք մարդկանց տուգանում էին մեքենաները լվանալու եւ այգիները ջրելու համար: Բերքի ծավալը նվազեց 50 տոկոսով:

Ֆրանսիայի գետերը համարյա ամբողջովին չորացել էին: Իսկ մնացած ջուրն այնքան էր տաքացել, որ այն այլեւս անհնար էր օգտագործել Գոֆլեշի էլեկտրակայանի սառնեցման համար:

Մայիսից օգոստոս ընկած ժամանակահատվածում անձրեւի եւ ոչ մի կաթիլ չտեսան Իտալիայի բնակիչները: Ի հետեւանք՝ երկրին պատուհասեց վերջին 250 տարվա մեջ ամենաուժեղ երաշտը: Սիցիլիայում սովորական ջրի շիշն ավելի թանկ արժեք, քան մի շիշ գարեջուրը կամ զինին:

«**<<<** շքեղ բնական ծովածոցում, տուրիստական ավաններ կանուցելու ծրագրերը:

Մալինդի կենսոլորտային արգելանոցի ղեկավարությունը տազնապատ է ոչ միայն ծովում ջրի մակարդակի բարձրացման ազդեցությամբ:

Գլխավոր հիմնախնդիրն աղբատուությունն է, որի հետեւանքն են մանգրայի թփուտների հատումը, որսագողությունն ու ձկնագողությունը: Բացի նրանից, որ մանգրայի անտառները բնական բուծարաններ են ձկների, որոնք հետո որսում են տեղի բնակիչները, դրանք նաեւ կենսականորեն անհրաժեշտ շինանյութերի աղբյուր են:

ՄԱԿ-ի պարենային կազմակերպության գնահատականներով՝ քեմիական ափերն արդեն կորցրել են մանգրայի անտառների 50 տոկոսը: Դրա մի մասը հատվել է բնակարանային շինարարության եւ գյուղատնտեսության կարիքների համար, մյուս մասն էլ ոչնչացվել է աղահանքերի գործունեությունը կարգավորելու համար տարվող աշխատանքների ընթացքում, ինչպես նաեւ կորստի է մատնվել նավթի ու նավթամթերքների արտահոսմամբ աղտոտվելու հետեւանքով: Բնության պահպանության Mida Creek խումբը եւ այլ կազմակերպություններ ջանում են, որպեսզի կենսոլորտային արգելանոցում կրկին մանգրայի անտառակներ աճեցվեն: Նրանք նաեւ կոչ են անում տեղի բնակչու-

թյանն ակտիվորեն ներգրավվել այդ աշխատանքներում: Այն փաստը, որ զբոսաշրջիկները բոլոր կողմերից այս տեղերն են «հոսում», որպեսզի տեսնեն այնպիսի չվող թռչունների, ինչպիսին է ֆլամինգոն, լրացուցիչ խթան է հանդիսանում, քանի որ էկոտուրիզմի հնարավորություններ է բացում:

Իրադրությունը հղի է բախումներով, քանի որ տեղի համայնքի էնտուզիաստները ձգտում են կանգնեցնել մերձափնյա տարածքների անվերահսկելի կառուցապատումը, վերջ դնել անօրինական ու կործանարար ձկնորսությանն ու մանգրայի թփուտների հատմանը: Կարծես թե Մալինդի-Բատամուի տեղական համայնքը Հյուսիսային Դելավերի համայնքից շատ ավելի լավ է ըմբռնում էկոհամակարգի կարեւորությունը, հասկանում դրա արժեքավորությունը եւ մեծ ցանկությամբ աշխատում է դրա պահպանման ուղղությամբ: Հավանաբար, դա հենց այն է, ինչը Մեծ Բրիտանիան կարող է սովորել Քեմիայից:

Տեխնոլոգիական անդունդի կրճատումը

«Մալինդի-Բատամու» կենսոլորտային արգելանոցի կոմիտեն կցանկանա ավելի շատ տեղեկություն ու տվյալներ ունենալ արգելոցում կլիմայի փոփոխության վերաբերյալ, բայց առայժմ անհրաժեշտ ռեսուրս-

ներ չունի, որպեսզի կարողանա մոդելավորել ծովում ջրի մակարդակի բարձրացման ազդեցությունը: Երկու կենսոլորտային արգելանոցների անձնակազմերը հույս ունեն, որ կհավաքեն նվազագույնը 150 000 դոլար, որպեսզի ստանան մետեորոլոգիական լազերային լոկատորի տվյալները եւ տվյալ տեղանքի բառիմետրիական (ստորջրյա) տվյալները եւ մտցնեն մոնիտորինգի ու կառավարման առավել արդյունավետ համակարգեր՝ ապահովելով հասարակայնության ակտիվ մասնակցությունը:

Այդ ընթացքում «Մալինդի-Բատամու» կենսոլորտային արգելանոցի անձնակազմը մտքեց հսկողության պարզ մի ռեժիմ, որը կօգնի մոդելավորելու առափնյա շերտը՝ հենց որ կգտնվեն անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

Կլիմայի փոփոխության գծով Միջկառավարական խմբի խոշորամասշտաբ կլիմայական մոդելներն ու զեկույցները որոշակի պատկերացում են տալիս, թե ինչ կարելի է սպասել, բայց մեզ հարկավոր է նաեւ հասնել կլիմայական փոփոխությունների կործանարար ազդեցության ավելի խոր ըմբռնման հենց տեղական մակարդակով, որպեսզի, քանի դեռ ուշ չէ, կարողանանք հարմարվել այդ փոփոխություններին: Դա հատկապես կարեւոր է զարգացող երկրների համար, եթե հաշվի առնենք, որ նրանք են, ամենայն հավանականությամբ, իրենց վրա վերցնելու մո-

լորակի կլիմայի փոփոխության ընթացքի հիմնական հարվածը: Անհրաժեշտ է ամեն կերպ ամրապնդել համագործակցությունը ժամանակակից տեխնոլոգիաների տիրապետող եւ չտիրապետող երկրների միջև:

Մեծ Բրիտանիայի մետեորոլոգիական ծառայությունն ուսուցում անցկացրեց Սահարա անապատից հարավ գտնվող երկրներում աշխատող իր պաշտոնակիցների համար՝ սովորեցնելով նրանց, թե ինչպես պետք է օգտվել Precip սարքից, որը հնարավորություն է տալիս փոքրացնելու մեծ կլիմայական մոդելների մասշտաբը: Precip-ի մոդելները, LiDAR մետեորոլոգիական լազերային լոկատորի եւ այլ սարքերի կիրառումը հնարավորություն կտա երկրներին, որպեսզի նրանք սկսեն պլանավորել իրենց ապագան:

Վերջում այսպիսի մի փոխաբերական պատկեր. սերֆինգավարը տեսնում է մոտեցող ալիքը, կանխատեսում է նրա վարքը եւ հետո սլանում նրա կատարին, որպեսզի այդ ալիքը չսպանի իրեն... Իսկ կենսոլորտային արգելանոցները կարող են սովորեցնել հասարակություններին, թե ինչպես կարելի է «հեծնել» կլիմայական փոփոխությունների ալիքը՝ հայտնվելով նրա կատարին:

Բնական գիտությունների վերաբերյալ քառամսյակի տեղեկատվական #4 բյուլետեն, ՅՈՒՆԵՍԿՕ

Մասնագետի անկյուն



Պարահողմեր

(սմերչներ, տրոմբներ, փոռնադոներ)

Պտահողմերը (սմերչներ, տրոմբներ, տոռնադոներ) օդերևութաբանական ամենաաղետալի երևույթներից են և հսկայական վնաս են պատճառում ժողովրդական տնտեսությանը, խլում բազմաթիվ մարդկային կյանքեր:

Պտահողմերի ծագման պատճառները երկար ժամանակ անհայտ էին: Դրանց առաջացման վերաբերյալ առաջարկվող հիպոթեզները եղել են ոչ իրատեսական և գիտականորեն չհիմնավորված:

Ի վերջո, 1911 թ. Ա. Վեգեներին հաջողվեց տալ ճշգրիտ բացատրությունը: Ըստ նրա հիպոթեզի՝ պտտահողմը միաժամանակ կարող է առաջանալ ամպրոպային ամպի երկու կողմում, ընդ որում պտտահողմի ուղղությունը երկու կողմում էլ պետք է լինի հակադիր: Բազմաթիվ դեպքեր են նկատվել՝ Վեգեները կարողացավ հերքել Ֆերրելի թերմոդինամիկ տեսությունը, ըստ որի ամպրոպային պրոցեսի ժամանակ պտտահողմը զրավում է կենտրոնական դիրք: Նա ցույց տվեց, որ պտտահողմի հիմնական մասը բաղկացած է ամպի ներսում և ունի ուղղաձիգ առանցք:

Հիմնվելով Վեգեների հիպոթեզի վրա՝ Մարկգրաֆը ներկայացրեց մի շարք տեսակետներ: Նա հաստատեց, որ պտտահողմի ձևավորման համար անհրաժեշտ են բավարար պայման է կոյտա-անձրեային ամպի արագ զարգացումը:

Օբլենսկին (1938 թ.), Բրենտը (1938 թ.), ուսումնասիրություններ կատարելով իդեալական հեղուկի ներսում, փորձեցին տալ պտտահողմի ծագման վերաբերյալ որևէ մոդել: Սակայն այդ փորձը պտտահողմի առանցքի մոտ շարժման մասին ճշգրիտ պատկեր չտվեց, քանի որ իդեալական պտտահողմի կենտրոնում արագությունն անհավասարաչափ է:

Ներկայումս արդեն գիտականորեն հիմնավորված է, որ պտտահողմի առաջացման պատճառը հզոր կոյտա-անձրեային ամպի առկայությունն է, որի ազդեցությամբ ձևավորված հորիզոնական առանցքով փոթորիկը, կինեմատիկայի օրենքներով հիմնավորված (եթե զազում առաջանում է հորիզոնական առանցքով հողմապտույտ, ապա առանցքի երկու ծայրերը միանալով իրար՝ առաջացնում են ուղղաձիգ առանցքով մրրկայուն), վեր է ածվում ուղղաձիգ առանցքով պտտահողմի:

Ջրային մակերեսային (լիճ, ծով, օվկիանոս) վրա ձևավորված պտտահողմը կոչ-

վում է սմերչ, ցամաքի վրա՝ տրոմբ, որը համապատասխանում է ամերիկյան տոռնադո անվանմանը:

Յուրաքանչյուր ամպրոպային ամպի անցման ժամանակ մեծանում է պտտահողմի առաջացման հավանականությունը, չնայած շատ դեպքերում նրա ինտենսիվությունը կարող է լինել ոչ շատ մեծ:

Մեր հանրապետության տարածքում տարվա տաք ժամանակահատվածում, պայմանավորված ամպրոպային գործունեությամբ, մեծանում է նաև պտտահողմերի առաջացման վտանգը:

Ճիշտ է, այդ երևույթը ՀՀ-ում դիտվում է ոչ շատ մեծ հաճախականությամբ, սակայն եղածն էլ կարող է հասցնել հսկայական վնաս տնտեսությանը և խլել մարդկային կյանքեր:

Պտտահողմը ուղղաձիգ առանցքով հողմապտույտն է, որն ուղեկցվում է քամու կտրուկ ուժգնացմամբ: Քամիների արագությունը պտտահողմում կարող է հասնել 300 մ/վ-ի: Պտտահողմի տրամագիծը ջրային մակերեսի վրա հասնում է 50-200 մ, իսկ ցամաքի վրա՝ 100-1000 մ (երբեմն մինչև 2 կմ): Պտտահողմի տեսանելի բարձրությունը 800-1500 մ է: Հորիզոնական մակերեսային վրա պտտահողմի արագությունն այնքան մեծ է, որ օդը կատարում է պտտակային վերընթաց շարժում և պտտահողմի ներսում ջրային գոլորշին խտանում է՝ առաջացնելով ամպ: Պտտահողմի ներսում ճնշումը, կենտրոնախույս ուժի շնորհիվ, խիստ ցածր է: Երբեմն այն կարող է ջրի սյունը բարձրացնել մինչև 6-10 մ: Հեցեց ճնշման անկումով է բացատրվում պտտահողմի հսկայական ուժը, որի շնորհիվ նա կարող է տարբեր առարկաներ շարժել կամ տեղափոխել հսկայական տարածությունների վրա:

Պտտահողմերն առաջանում են ամպրոպային ամպերում և այստեղից տարածվելով, հասնում երկրի մակերեսին: Սովորաբար ամպրոպային ամպից ներքե է իջնում ձագարածե էլուստ, իսկ նրան ընդառաջ է բարձրանում ջրի կամ փոշու սյուն: Այսպիսով, ձևավորվում է հսկայական սյուն, որը կարծես միացնում է ամպը ծովի կամ ցամաքի հետ: Մեկ ամպրոպային ամպից կարող է միաժամանակ իջնել ոչ մեծ տրամագծով մի քանի սյուն:

Այս պտտահողմերն ունեն ավերիչ մեծ ուժ: Դրանք արմատախիլ են անում ծառեր, պոկում տանիքներ, հասցնում մարդկային զոհերի: Հաճախ պտտահողմի անցման ժամանակ շենքերի լուսամուտները և պատերն ավերվում են: Դա պայմանավորված է նրանով, որ շենքի ներսում ճնշումը շատ ավելի բարձր է, քան պտտահողմում:



Ամենաավերիչ պտտահողմերը տոռնադոներն են: Այս պտտահողմում քամու արագությունը կարող է հասնել 300 մ/վ, իսկ ճնշումը կենտրոնում կարող է նվազել մինչև 25 միլիբար: Շնորհիվ ուժեղ քամիների, կենտրոնախույս ուժը պոչային հատվածից շարժում է փոշի, ավազ, որի հետեւանքով տոռնադոն ունենում է գորշ տեսք: Տոռնադոյի անցած ճանապարհի լայնությունը կարող է հասնել 1 կմ-ի՝ ունենալով ավերիչ հետեւանք: Հաճախ տոռնադոյի զարգացման ընթացքում, կոյտա-անձրեային ամպից ամպային պոչը կարող է իջնել ցած, հետո կարճատեւ թուլանալ և նորից զարգանալ: Երբեմն լրիվ ձևավորված պոչը չի հասնում գետնին և կախված է մնում մայր ամպից: Տոռնադոները նկատվում են նաև առանձին, ինտենսիվ զարգացող ամպրոպային ամպի ժամանակ, սակայն այդպիսիք ունենում են կարճ կյանք, և անկանոն ուղղություն:

Պտտահողմերը լայն տարածում ունեն հատկապես արեւադարձային, մերձարեւադարձային և բարեխառն գոտիներում, որը պայմանավորված է այս լայնություններում պտտահողմերի առաջացման բոլոր հնարավոր պայմանների առկայությամբ:

Սրանց առաջացման ամենակտիվ շրջանը ԱՄՆ-ի կենտրոնական գոտին է, որտեղ ինտենսիվ տարածում ունեն տոռնադոները: Այդ իսկ պատճառով ԱՄՆ-ին հաճախ անվանում են «տոռնադոների երկիր»: Այստեղ տարեկան դիտվում է մոտ 700 տոռնադո, որոնցից 75-ը՝ ավերիչ են:

Ի տարբերություն միջին լայնություններին, բարձր և ցածր լայնություններում պտտահողմեր ավելի քիչ են նկատվում, սակայն այստեղ նույնպես դրանք առաջացնում են հսկայական ավերածություններ:

Օրինակ հայտնի է, որ 1974 թ. ապրիլի 3-4-ը, ԱՄՆ-ի 11 նահանգներում և Կանադայում 18 ժամվա ընթացքում առաջացել է 148 տոռնադո: Վերջին 500 տարվա ընթացքում ԱՄՆ-ում դիտված 17 հազ. տոռնադոներից ԱՄՆ-ում զոհվել է 11 հազ. մարդ:

Միջին հաշվով ԱՄՆ-ում տոռնադոներից տարեկան զոհվում է 113 մարդ, իսկ նյութական վնասի չափը հասնում է 2 մլրդ դոլարի: Այսպես, 1925 թ. մարտի 18-ին ծագած տոռնադոյից զոհվել է 690 մարդ, իսկ 1957-ին՝ 864: 1965 թ. ԱՄՆ-ի տարբեր մասերում դիտված 17 տոռնադոյից զոհվել է 257 մարդ: 1971 թ. փետրվարին Լուիզիանա և Միսսիսիպի նահանգներում մոլեգնած տոռնադոյից զոհվել է 100 մարդ:

Հայաստանում ամենից հաճախ պտտահողմեր դիտվում են այն շրջաններում, որտեղ տարվա տաք ժամանակահատվածում նկատվում է ակտիվ ամպրոպային գործունեություն: Այդ շրջաններն են՝ Շիրակը, Լոռին և Տավուշը, ինչպես նաև Արագածոտնի լեռնային շրջանները:

Գագիկ Սուրենյան
Հայաստանի հողմերի օդերևութաբանական կանխատեսումների բաժնի պետ

Հյուսիսային և հարավային կիսագնդերում հաճախակի կարելի է հանդիպել արեւադարձային ցիկլոնների, որոնք ուղեկցվում են ուժեղ փոթորիկներով: Դրանց գործունեության շրջաններն են Կարիբյան ծովը, ԱՄՆ-ի մի քանի նահանգ, Մեքսիկան, ճապոնիան, Չինաստանը, Ֆիլիպինները, Կորեան, Հնդկաչին թերակղզին, Մադագասկար, Ռեուნიոն և Մավրիկիա կղզիները: Եվ քիչ չեն այն դեպքերը, երբ դրանք ազդել են կենսաբանական գործընթացների վրա, երբեմն էլ որոշակի դեր խաղացել մարդկության զարգացման գործում:

Ահա, թե ինչպես է 1492 թվականի փետրվարի 14-ին իր նավատորմի մնացորդներին պատուհասած փոթորիկը նկարագրել Կոլումբոսը. «Ես երբեք չէի տեսել ծովն այդքան ակեղնով, աղպես սարսափելի և այդչափ փոփրակալած: Քամին թույլ չէր տալիս առաջ շարժվել... Ծովը կարծես եռում էր, ինչպես կաթսայով լի ջուրը կրակի վրա... Փոթորիկը սարսափ էր ներշնչում, ջուրն ասես բոսորակարմիր և արյունոտ էր: Երկինքն ու ծովը գիշեր-ցերեկ բորբոքված

Արեւադարձային ցիկլոնների պայմանությունից

էին, կարծես շրջակայքը դժոխքի մեծ լիճեր, իրե կայծերը շիկացնում էին երկինքը: Դա իսկական հեղեղ էր: Մարդկանց ուժերը հատել էին, նրանք այնպես էին հյուժվել, որ գերադասում էին մահը: Նավերը կորցնում էին մակույկները, խարխիւները, նավասարքերը, մարդիկ չգիտեին՝ ինչ ուղղությամբ են նավարկում...»: Բարեբախտաբար, Կոլումբոսին հաջողվեց կործանումից փրկվել:

Ցիկլոնների կենսաբանական նշանակությունն այն է, որ դրանք ունակ են հսկայական տարածություններով տեղափոխելու բույսերի սերմեր, երբեմն էլ՝ նաև խոշոր կենդանիներ: Հավանական է, որ հենց այս քամիներն էլ նպաստել են մի շարք հրաբխային և կորալյան կղզիների բնակեցմանը և բույսերի ու կենդանիների գաղթին:

1780 թվականին «Մեծագույն» անունով հայտնի փոթորիկը կործանեց Սավանուլա-Մառ քաղաքը (ԱՄՆ, Ջորջիայի նահանգ): Ըստ ականատեսի վկայության, բնակիչները տեսնելով մոտեցող ալիքները՝ քարացան զարմանքից: Հսկայական քամու մեկ հանկարծակի պոռթկումը մաքրեց իր առջև հանդիպած բոլոր խոշոր ուղտերը, ողողեց քաղաքը և տարավ ամեն ինչ: Յոթ օր անց փոթորիկը հասավ առավելագույն հզորության, ամբողջությամբ ոչնչացրեց Սենթ Լյուսիա կղզին, որտեղ 6000 մարդ զոհվեց փլատակներում, և հեղեղեց կղզու ներսիս գցած անգլիական նավատորմը: Ծովի բարձրակատար տիտանական ալիքներից մեկը մի նավ բերեց և զցեց ծովային հոսպիտալի վրա, ինչն էլ լաստանավի ծանրությունից փլվեց: Այնուհետև փոթորիկն ուղղություն վերցրեց Մարտինիկա կղզի, որտեղ ջրի տակ անցավ ֆրանսիական 40 լաստանավ, որոնք 4000 զինվոր էին փոխադրում: Ամայացան հյուսիսում գտնվող Դոմինիկա, Սենթ Եստատիուս, Սենթ Վինսենթ, Պուերտո Ռիկո կղզիները, ինչպես նաև շատ նավեր, որ հայտնվել էին ցիկլոնի ճանապարհին, ջրատույզ եղան:

1970 թվականի նոյեմբերի 13-ին անհավանական ուժգնությամբ փոթորիկ անցավ Արեւելյան Պակիստանի ափամերձ շրջաններով: Ութմետրանի ալիքն անցավ շրթա կազմած և խիտ բնակեցված կղզիների վրայով: Դա մի զարմանալի ջրային պատ էր, եռացող և մոլեգնող հսկայական ջրային հորձանք: Մաքրելով ճանապարհին հանդիպած ամեն ինչ՝ այն հարվածեց ափին՝ բերելով աղետալի ավերածություններ: Մի քանի ժամ այդ կղզիները և ցամաքապատ ափերի մի մասը մնացին ջրի տակ: Փոթորիկի հետեւանքները սարսափելի էին. քանդված կամուրջներ, ավերակ դարձած ճանապարհներ ու երկաթուղիներ, բնակիչների հետ ոչնչացած գյուղական համայնքներ: Ըստ թերթերի տեղեկատվության՝ տուժեց ավելի քան 10 մլն. մարդ: Չոհվածների թիվը հասավ կես միլիոնի, ըստ որոշ տվյալների՝ մոտ մեկ միլիոնի: Սա ամբողջ մարդկության պատմության մեջ տեղի ունեցած ամենաուժեղ տարերային աղետն էր:




Պատահարներ ջրում

Հայաստանում բավական շատ են լինում ջրահեղձման ողբերգական դեպքեր: Դուք ինքներդ էլ երեւի հաճախ լսում եք Սեւանա լճում եւ այլ ջրավազաններում մարդկանց ջրահեղձվելու մասին: Այս հարցը հատկապէս արդիական է հիմա՝ ամռան այս շոգ ամիսներին, երբ Սեւանա լիճը դառնում է ամենասիրելի հանգստի գոտիներից մեկը: Ջրում պատահար կարող է տեղի ունենալ յուրաքանչյուրի հետ, անկախ այն բանից, թե որքան լավ լողորդ է նա: Նույնիսկ լավ լողորդը կարող է ջրահեղձ լինել հանկարծահաս հիվանդության կամ հոգնածության պատճառով:

Ի՞նչ անել


Պատահարը գնահատելու համար եղեք զգոն եւ ուշադիր ցանկացած արտասովոր նշանի նկատմամբ: Դուք կարող եք նկատել լողորդի տարօրինակ վարքագիծը, լսել նրա ճիչը կամ ջրի հանկարծակի ճողփյուն: Հաշվի առեք, որ ջրում խեղդվող մարդկանց մեծ մասն օգնություն կանչել չի կարողանում: Նրանք ամեն ինչ անում են գլուխը ջրի մակերեսին:



Մատակարար ջուր նետվելով՝ դուք նույնպես կարող եք տուժած դառնալ:


Քաջալերեք ջրում գտնվող տուժածին, խոսեք նրա հետ: Հնարավոր է, որ հետեւելով ձեր հանգիստ եւ քաջալերող խորհուրդներին՝ տուժածն ինքնուրույն հասնի ապահով տեղ: Հակառակ դեպքում դուք կարող եք նրան մեկնել որեւէ առարկա, օրինակ՝ ձող, ծառի ճյուղ, գոտի եւ այլն: Երբ տուժածն ամուր բռնի առարկայից, մի փոքր կռացեք եւ մարմնով հետ ընկնելով դանդաղ ու զգուշորեն քաշեք նրան դեպի ապահով տեղ: Եթե ձեռքի տակ ոչ մի հարմար առարկա չունենք, պառկեք ջրավազանի եզրին եւ ձեր ձեռքը մեկնեք տուժածին:

Ձեզանից հեռու գտնվող տուժածին փրկելու համար կարելի է նրա կողմը նետել ջրի մակերեսին լողացող որեւէ առարկա՝ պարանով կապած: Օրինակ՝ փրկարար օղակ, կիսով չափ ջրով լցված պլաստմասսայե տարրոլություն, անվաղող եւ այլն:



սին պահելու համար: Ուշադիր եղեք, եւ եթե տեսնում եք որեւէ մեկին, որը ջրում տարօրինակ շարժումներ է անում կամ փորձում է լողալ եւ առաջ չի գնում, ապա հնարավոր է, որ նա օգնության կարիք ունի:

Պատահարը ճանաչելուց եւ գնահատելուց հետո, ինչպես յուրաքանչյուր դժբախտ պատահարի դեպքում, գործեք զգուշորեն: Եթե տուժածը գտնվում է ջրում, ապա առաջին հերթին փորձեք նրան օգնություն ցույց տալ առանց ջուր մտնելու: Օգնելու



Կանգնեք նետող ձեռքի կողմի ոտքը մի փոքր հետ, իսկ մյուս ոտքով կանգնեք պարանի ծայրին: Պարանի կեսը փաթաթած վիճակում պահեք ձեր մի ձեռքում, մյուսով նետեք առարկան՝ ներքեւից դեպի վեր ուղղված շարժումով: Փրկարարական միջոցը նետեք տուժածին մի փոքր հեռու, այնուհետեւ քաշելով բերեք նրան մոտ: Ասեք տուժածին, որ ամուր բռնի դրանից: Երբ տուժածն ամուր կառնի առարկայից, մարմնով հետ ընկնելով՝ դանդաղ եւ զգուշորեն քաշեք նրան դեպի ապահով տեղ:

Որոշ դեպքերում, եթե համոզված եք, որ ջուրը ծանծաղ է եւ կանգնած վիճակում չի ծածկում ձեր գլուխը, տուժածին փրկելու համար կարող եք մտնել ջուրը: Գտնվելով ջրի մեջ՝ դարձյալ ավելի ապահով է տուժածին որեւէ առարկա մեկնելը: Աշխատեք այնպես անել, որ առարկան լինի ձեր եւ տուժածի միջև, որպեսզի վերջինս չկառնի ձեզանից:

Եթե կարող եք տուժածին հասնել, եւ եթե նա երեսնիվայր է պառկած ջրի մեջ, զգուշորեն շրջեք նրան եւ թեւատակերից բռնելով՝ հետ-հետ քայլելով տեղափոխեք նրան ջրի միջով մինչեւ լողավազանի եզրը, հետո հանեք նրան ջրից:


Եթե կասկածում եք, որ տու-

ժածն ունի ողնաշարի վնասվածք, ապա ձեր հիմնական խնդիրը տուժածի դեմքը ջրից դուրս պահելն ու գլխի եւ ողնաշարի շարժումները կանխելն է: Այդ նպատակով զգուշորեն բռնեք նրա բազուկներից, վեր բարձրացրեք ձեռքերը գլխի երկայնքով: Տուժածի ձեռքերը գլխին սեղմելով՝ նրան շրջեք երեսով դեպի վեր: Մի ձեռքով պահեք տուժածի գլուխը բազուկների միջև, իսկ մյուս ձեռքը անցկացրեք ազդրերի տակով: Աշխատեք տուժածի մարմինը պահել հորիզոնական դիրքով՝ դեմքը ջրից դուրս: Մինչեւ օգնության ժամանակը պահեք տուժածին ջրի մեջ այս դիրքում:

Տուժածին ափ հանելուց հետո շնչուղիներից ջրի եւ այլ հեղուկների արտահոսքն ապահովելու համար նրան շրջեք երեսնիվայր, այնուհետեւ գնեք տուժածին եւ գործեք իրավիճակին համապատասխան:

Եթե ինքներդ եք հայտնվել խեղդվողի դերում, առաջին հերթին խուճապի մի՛ մատնվեք, փորձեք օգնության ազդանշան տալ եւ մնալ ջրի երեսին, մինչեւ օգնությունը հասնի:

Եթե անսպասելիորեն ջուրն էք ընկել, ջրի վրա լողալուն կամ ջրի մակերեսին մնալուն հնարա-



վոր է, որ ձեր հագուստը խանգարի եւ այն հանելու կարիք լինի: Սակայն որոշ դեպքերում կարող եք օգտագործել ձեր հագուստն ինչպես խուճապի միջոց: Եթե ձեզ հաջողվի օդ հավաքել վերնաշապիկի ուսերի մասում, ապա փրկվելն ավելի հեշտ կլինի: Դրա համար հանգուցեք վերնաշապիկի ստորին եզրերը կամ վերնաշապիկը դրեք անդրավարտիքի գոտու տակ: Խորը շունչ քաշեք, գլուխը թեքեք առաջ, քաշեք վերնաշապիկը դեպի վեր եւ փչեք վերնաշապիկի բացվածքի մեջ: Ներփչած օդը բարձրանում է վերնաշապիկի ուսերի հատվածում բուշտ է առաջացնում, որն օգնում է ձեզ մնալ ջրի մակերեսին:

Կանխարգելում

Ջրում տեղի ունեցող դժբախտ պատահարներից խուսափելու համար անհրաժեշտ է պահպանել անվտանգության հետեւյալ կանոնները:

Երեխաներին մի՛ թողեք ջրի մոտ առանց հսկողության:

Միշտ ձեռքի տակ ունեցեք փրկարար լողունակ միջոցներ:

Երբեք մենակ ջուր մի՛ մտեք եւ միայնակ մի՛ս լողացեք, ինչքան էլ հիանալի լողորդ լինեք:

Ջրի մոտ գտնվելիս ոգելից խմիչքներ մի՛ օգտագործեք:

Լողալու ընթացքում կատակներ մի՛ արեք՝ իրար մի՛ քաշքշեք, մի՛ փորձեք սուզել եւ այլն: Նման կատակները հաճախ դժբախտ պատահարների պատճառ են դառնում:



Օգնի՛ր տուժածին

Իրավիճակ Միջադի խայթոց

• Կծած տեղում այրոցի զգացողություն, ցավ, այտուց:

Ձեր գործողությունները

• Պինգետով կամ այլ համապատասխան գործիքով հեռացրեք խայթը՝ թունավոր պարկի հետ միասին: խայթոցի տեղը շփեք օղեկոլոնով, յոդով կամ անուշադրի սպիրտով: Այտուցի վրա սառույց դրեք՝ թույնի հետագա տարածումը կանխելու համար: Գլխացավի, փսխման ու ցնցումների դեպքում կորդիամինի 20-30 կաթիլ տվեք եւ բժշկ կանչեք:

• Ալերգիկ ռեակցիայի դեպքում (քոր, այրոց ու քնքնություն, ձեռքերի ու ոտքերի թուլություն, դեմքի ու կոկորդի այտուց, փսխում) անհապաղ Շտապօգնու-

թյուն կանչեք: Հիվանդից մի հեռացեք, քանի որ կարող է անաֆիլակտիկ շոկ սկսվել, որի ժամանակ գիտակցության կորուստ, սրտի ու շնչառության կանգ է առաջանում: Հիվանդին հակահիստամինային որեւէ միջոց տվեք՝ դիմեղրով, դիագոլին, սուպրաստին, տավեգիլ:

Միջատների բազմաթիվ խայթոցներ

• Թուլություն, գլխացավ, դող, սրտխառնոց, փսխում: Սրտխայթոց: Ցավ գոտկատեղի շրջանում: Մարմնի ջերմաստիճանի բարձրացում: Ցնցումներ, գիտակցության կորուստ:

Հիշեք, մի քանի տասնյակ միջատների խայթոցները մահացու են:

Ձեր գործողությունները

• Ապահովեք տուժածի հանգիստը, անկողնային ռեժիմը, դիմեղրով տվեք: Այտուցի վրա սառույց դրեք՝ թույնի տարածումը կանխելու համար: Գլխացավի, փսխման ու ցնցումների դեպքում

կորդիամինի 20-30 կաթիլ տվեք եւ բժիշկ կանչեք՝ անհրաժեշտ է տուժածին շտապ տեղափոխել հիվանդանոց:

Իրավիճակ Էլեկտրական հոսանքի հարված

• Գիտակցության կորուստ, ցնցումներ, շնչառության եւ արյան շրջանառության կանգ

• Գիտակցության կորուստ, ցնցումներ, շնչառության եւ արյան շրջանառության կանգ



(թվացյալ մահ), այրվածքներ մարմնի վրա, «հոսանքի հետքեր», բարձրավոլտ հոսանքից առաջացած տրավմայի դեպքում՝ հյուսվածքների խոր այրում:

Ձեր գործողությունները

• Տուժածին ազատեք հոսանքի ազդեցությունից (զգուշ եղեք, որ ինքներդ էլ հոսանքի հարված չստանաք) եւ Շտապօգնություն կանչեք:

• Եթե տուժածը գիտակցությունը չի կորցրել, ակնհայտ այրվածքներ ու ծանր վնասվածքներ չունի, նրան պառկեցրեք մեջքի վրա, քանդեք շնչառությանը խանգարող հագուստը, հանգստացնող ու ցավազրկող դեղ տվեք. անալգին, ասպիրին, վալերիանայի կաթիլներ: Սպասեք բժշկի ժամանելուն կամ ինքներդ տեղափոխեք նրան հիվանդանոց, բայց թույլ մի տվեք, որ շատ շարժվի:

Ուշադիր եղեք հիվանդի տեղափոխման ժամանակ. շնչառության կամ սրտի կանգ կարող է տեղի ունենալ ցանկացած պահի: Թույլ մի տվեք, որ հեղուկ ընդու-

մի՛ դա կառաջացնի սրտխառնոց եւ շնչառության խանգարում: Երբեք մի՛ ծածկեք տուժածին հողով՝ դա ոչ մի արդյունք չի տա (մարմինը սառում է, վերքերն ու այրվածքներն աղտոտվում են):

Ուշագնացության դեպքում (գիտակցության բացակայություն, բայց շնչառության առկայություն) տուժածին կողքի պառկեցրեք կոշտ հորիզոնական մակերեսի վրա, ապահովեք թարմ օդի հոսքը: Քթին մոտեցրեք անուշադրի սպիրտով թրջած բամբակ, ջրով ցողեք, շփեք ու տաքացրեք մարմինը, այրվածքների վրա ստերիլ փաթաթան դրեք:

• Եթե տեղի է ունեցել սրտի կանգ (բերը լայնացած են ու լույսին չեն արձագանքում, անթափարկ չկա), անհապաղ ձեռնամուկ եղեք արհեստական շնչառության ու սրտի անուղղակի մերսմանը: Գործողությունները մի դադարեցրեք մինչեւ անթափարկ եւ ինքնուրույն շնչառության լրիվ վերականգնումը, բերի նեղացումը, ինչպես նաեւ՝ բժշկի ժամանումը:



Երեխաների համար

Տանը՝ մենակ

Ո՞ր տարիքից կարելի է երեխային տանը միայնակ թողնել: Այս հարցին ոչ-ոք չի կարող պատասխանել, որովհետև դա կախված է բազմաթիվ հանգամանքներից: Դրանք հիմնականում վերաբերում են երեխայի տարիքին, նրա ինքնուրույնությանը և նրա հանդեպ վստահությանը: Այդ պատճառով այստեղ անհրաժեշտ է ցուցաբերել խիստ անհատական մոտեցում, սակայն կա մեկ ընդհանուր սկզբունք՝ պետք է երեխային աստիճանաբար ընտելացնել տանը միայնակ մնալուն: Բայց նախքան դա անելը, նրան պետք է սովորեցնել որոշ կանոններ:

Գիտնականներն ապացուցել են, որ երեխան թվերն ավելի շուտ է սկսում ճանաչել, քան տառերը: Հետևաբար, դուք կարող եք բացատրել նրան, թե որ վտանգի դեպքում ուր կարելի է դիմել: Օրինակ կարելի է թղթի կտորի վրա գրել արագ արձագանքման ծառայությունների 3 հիմնական հեռախոսահամարները՝ հորձեք ծառայության, շտապօգնության և ոստիկանության: Իսկ որպեսզի ավելի հեշտ լինի դրանք հիշելը, կարող եք 1-01-ի կողքին այրվող լուցկի նկարել, 1-02-ի կողքին լուսաֆոր, 1-03-ի կողքին կարմիր խաչ (կախված այն բանից, թե երեխան ինչ պատկերացումներ ունի դրանց մասին): Ընդ որում, չմոռանաք ասել, որ չի կարելի կեղծ ահազանգել, որովհետև դրա հետևանքով մեծ անախորժություններ կլինեն և հաջորդ անգամ արդեն իրական վտանգի դեպքում քեզ չեն հավատա և չեն գա օգնության:

Այս 3 հեռախոսահամարներից բացի երեխան պետք է իմանա նաև շենքի հարեւանների, ընտանիքի ընկերների, բարեկամների, ինչպես նաև ծնողների աշխատանքային հեռախոսահամարները, որպեսզի վտանգի դեպքում կարողանա կապվել ձեր ընկերների կամ ձեզ հետ: Անպայման երեխային սովորեցրեք իր և ծնողների անունը, ազգանունը և տան լրիվ հասցեն: Արտակարգ իրավիճակներում այս գիտելիքները նրան շատ պետք կգան: Բնակարանը լքելիս չմոռանաք ստուգելու հարկը, ծակող առարկաները, պահել լուցկիներն ու հրահանները, որոնցով երեխան կարող է ինքն իրեն վնասել: Դա անհրաժեշտ է անել նույնիսկ այն դեպքում, երբ երեխային բացատրել եք, թե ինչպես պետք է վարվել դրանց հետ:

Եթե ապրում եք առաջին հարկում, ապա վարագույրներով քողարկեք պատուհանները: Երբ որեւէ մեկը թակում է պատուհանը, երեխան ոչ մի դեպքում չպետք է մոտենա և պետք է բարձր ձայնով բղավի: «Հայրիկ, հայրիկ, այստեղ արի»:

Տնից դուրս գալիս անպայման ստուգեք, թե արդյոք փակել եք գազի, ջրի ծորակները և անջատել բոլոր էլեկտրական սարքերը:

Հաճախ երեխայի հետ կրկնեք անվտանգության կանոնները: Ցանկության դեպքում կարող եք դրանք ստուգելու համար փոքրիկ քննություն կազմակերպել: Եթե նա այդ քննությունը բարեհաջող հանձնի, ապա համազօր խղճով կարող եք նրան տանը մենակ թողնել: Եթե նկատում եք, որ երեխան այդ կանոններից մեկն անտեսում է կամ լավ չի կատարում, մանրամասն բացատրեք նրան իր սխալը և դրանից բխող սպառնալիքները:

Ասում են՝ իմ տունն իմ ամրոցն է: Ձեր տունն իսկապես ձեր ամրոցը կդառնա այն ժամանակ, երբ ինքներդ անշեղորեն պահանք անվտանգության կանոնները և

նույնը պահանջեք ձեր երեխաներից: Երեխաների համար օրինակ ծառայելով՝ դուք կապահովեք նրանց անվտանգությունը:

Անվտանգությունը տանը

Ինչ վտանգներ են հանդիպում տանը

Ի՞նչը կարող է տանը վտանգավոր լինել... Որքան էլ տարօրինակ թվա՝ հատկապես տանն է պատահում դժբախտ դեպքերի մեծ մասը: Հենց բնակարաններում են մեզ դարձնակալում տարբեր «թակարդներ», որոնց ամեն օր զոհն են դառնում տասնյակ հազարավոր մարդիկ:

Գիտատեխնիկական առաջընթացն և պետ փոխեց և հեշտացրեց մեր կենցաղավարումը, բարելավեց կյանքի պայմանները: Բայց այդ նույն «գիտատեխնիկական առաջընթացը» նաև պահանջում է, որ սովորենք ու իմանանք նոր տեխնիկայի և կենցաղային սարքերի կիրառման անվտանգության կանոնները և խստորեն պահպանենք դրանք: Այլապես գիտատեխնիկական առաջընթացը պատուհաս կդառնա մեր գլխին: Որ այդպես չլինի՝ քննարկենք տանը մեզ դարձնակալող հնարավոր վտանգների պատճառները և տարբեր իրավիճակներում դրանց կանխարգելման միջոցները:

Տանը մահացու ելքով կենցաղային պատահարների մեծ մասն առաջանում է.

- պատահաբար վայր ընկնելուց,
- էլեկտրական հոսանքով էլեկտրահարվելուց,
- գազից և այլ նյութերից թունավորվելուց,
- խոհանոցային կտրող առարկաների հետ անզգույշ վարվելուց,
- նաև տանը եղած զենքի հետ անզգույշ վարվելուց:

Հիմա խոսենք տանը դարձնակալող վտանգների մասին առանձին-առանձին:

Վտանգ 1. Սուր-կտրող-ծակող առարկաներ

Խոհանոցում օգտագործվում են դանակներ, պատառաքաղներ, մսաղացներ, այլ սուր-կտրող-ծակող առարկաներ, որոնք



փոքրիկ անզգույշության դեպքում՝ տեղով վտանգ են: Ո՞վ գոնե մեկ անգամ դանակով չի կտրել ձեռքը: Եվ որպեսզի ձեռուտ կտրուելը սովորույթ չդառնա՝ պետք է հիշել ու պահպանել մի քանի պարզ կանոն.

- Չի կարելի խաղալ սուր-կտրող-ծակող առարկաներով, քանի որ դրանք կարող են վնասվածքի պատճառ դառնալ:
- Նման բոլոր առարկաները (դանակ, մկրտ, ասեղ, քրոց, պատառաքաղ, կոճ-գամ և այլն) պետք է գտնվեն իրենց տեղում:
- Եթե գտել եք սուր-կտրող-ծակող առարկաներ՝ պետք է դրանք հանձնել մեծահասակներին, կամ դնել մի ապահով, անվտանգ տեղ: Տան կարգուկանոնը ոչ միայն զեղեցկության է մաքրության համար է, այլև՝ անվտանգության:
- Երբ հաց, երշիկ կամ այլ մթերք եք կտրատում ուշադրությունը մի՛ շեղեք այլ բաների վրա:
- Մի՛ փորձեք կտրատել սառեցրած մթերք, սպասեք մինչև այն հալվի:

• Ապակյա սպասքի, դարակների, հայելիների հետ զործ ունենալիս հիշեք, որ դրանք փխրուն են ու հեշտ կտրվող: Ապակուց ստացած վերքերն ավելի ցավոտ են և ուշ են լավանում:

• Իսկ եթե, այնուամենայնիվ, վնասել եք ձեզ՝ ոչ մի դեպքում վերքին չդիպեք կեղտոտ ձեռքերով: Վերքի չորսբուրրը մշակեք յոդով և վիրակապեք:

Վտանգ 2. Էլեկտրասարքեր


Էլեկտրականությունը մեր կենցաղ է մտել 19-րդ դարի վերջում: Մինչ այդ փողոցները լուսավորվում էին նավթի ճրագներով, բնակարանները՝ յուղի ճրագներով կամ մոմերով: Մարդուն վաղուց չի զարմացնում «էլեկտրականություն» բառը: Աչքներս բացել ու տեսել ենք հեռուստացույց, սառնարան, վազքի մեքենա, արդուկ, լուսամուկի: Այսօր էլեկտրաէներգիան մեր կենցաղում ամենահավատարիմ օգնականն է, ու դժվար է պատկերացնել կյանքն առանց էլեկտրականության:

Բնակարաններում կան բազմաթիվ էլեկտրասարքեր: Առավտոից երեկո մեր հաշվիչը պտտվում է, քանի որ վառել ենք լույսը, միացրել հեռուստացույցը, էլեկտրասալիկների վրա ճաշ ենք եփում, աշխատում ենք համակարգիչով և այլն: Բայց դրանք կարող են նաև առողջությանը մեծ վնաս հասցնել, եթե չպահպանենք անվտանգության տարրական կանոնները:

Բոլոր էլեկտրասարքերը վտանգավոր են ոչ միայն էլեկտրահարելու իրենց կարողությամբ, այլև անփութությունը պատժելու և տանը հրդեհ առաջացնելու խստությանը:

Էլեկտրահարումը, կամ ինչպես ասում են՝ հոսանքահարումն, առաջանում է, երբ նույնիսկ մեկ ակնթաթ դիպչում ես բաց հաղորդալարին կամ անսարք վարդակին: Այդ պատճառով երեխաները պետք է իմանան էլեկտրական սարքավորումներից օգտվելու անվտանգության կանոնները.

- Օգտվիր միայն այն էլեկտրասարքավորումներից, որոնցից թույլ են տվել օգտվելու ծնողներդ:
- Միշտ պահպանիր էլեկտրասարքավորումները ցանցին միացնելու կարգը: Լարը սկզբում պետք է միացնել սարքին, այնուհետև՝ ցանցին: Իսկ անջատելիս՝ հակառակը, սկզբում անջատել ցանցից, հետո սարքից:
- Մի՛ փորձիր ինքնուրույն նորոգել անսարք էլեկտրասարքավորումը, առավել ևս, եթե այն անջատված չէ հոսանքից:
- Չի՛ կարելի մոտենալ կամ ձեռք տալ բաց էլեկտրալարերին:
- Եթե էլեկտրասարքավորումը հանկարծակի սկսում է այրվել, ապա՝
- հանիր էլեկտրալարը վարդակից, նախապես ձեռքդ փաթաթելով չոր շորի կտորով,
- սարքավորումը ծածկիր չոր ծածկոցով կամ այլ շորով,
- եթե այրումը շարունակվում է, անհապաղ ահազանգիր հրշեջ պահպանություն 1-01 հեռախոսահամարով:
- Չի կարելի այրվող էլեկտրասարքավորումը մարել ջրով, քանի դեռ այն անջատված չէ հոսանքի ցանցից, այլապես անմիջապես կհոսանքահարվես: Ջուրը կարող է նաև կարծ միացնում առաջացնել ու հրդեհի պատճառ դառնալ:
- ճիշտ է, ֆիլմերում տեսած կլինեք, որ հրդեհը ջրով են մարում, բայց հիշիր, որ ջրով կարող ես մարել այրվող վարագույրը, փայտը, բայց ոչ էլեկտրասարքավորումը: Էլեկտրականության և ջրի հարեւանությունը շատ վտանգավոր է, այդ պատճառով չի կարելի դիպչել էլեկտրասարքավորումների հաղորդալարերին թաց ձեռքերով:



- Խոնավ շորով երբեք չսրբես միացված հեռուստացույցի էկրանը:
- Ծաղկամանները մի՛ կախեք հեռուստացույցի, ձայնագրիչի, վարդակների վերևում, քանի որ դրանցից կաթող ջուրը կարող է ել՝ հրդեհի, ել՝ հոսանքահարման պատճառ դառնալ:
- Լոգարանում չի կարելի օգտագործել վարսահարդար (ֆեն) կամ էլեկտրական սափրիչ, քանի որ կա ջրով թրջելու վտանգ:
- Չի կարելի մեկ վարդակից միացնել բազմաթիվ էլեկտրասարքեր:
- Տնից, նույնիսկ սենյակից դուրս գալիս սովորույթ դարձրու անպայման անջատել բոլոր սարքերը (հեռուստացույց, ձայնագրիչ, էլեկտրասալիկ և այլն):
- Մի՛ օգտագործիր էլեկտրական արդուկ, թեյաման, սալօջախ, գողիչ (պայալնիկ) առանց հատուկ հրակայուն տակդիրի:
- Վտանգավոր է օգտագործել վնասված մեկուսիչ լարով էլեկտրասարք:
- Ձեռքդ չմոտցնես ջրի մեջ, եթե այն տաքանում է էլեկտրատաքացուցիչով, ինչպես տանն ենք ասում՝ կիպիտիլնիկով:
- Քիչ չեն դեպքերը, երբ երեխաներն, անտեսելով նախազգուշական բոլոր նորմերը, հետաքրքրությունից դրոված ձեռքը մոտցնում են էլեկտրական հաշվիչների, ապահովիչների խցիկը և էլեկտրահարվում: Այդպես մի՛ վարվիր:
- Լոգարանում վաննայի ջուրը չի կարելի տաքացնել էլեկտրատաքացուցիչով:
- Լողասենյակում միացրած մի՛ թող կենցաղային էլեկտրասարքը, քանի որ այնտեղ առաջանում են ջրային հոսանքահարող գոլորշիներ:
- Վարդակից խրիչը հանելիս երբեք լարից մի՛ ձգիր: Այն կարող է կտրվել՝ մերկացնելով լարվածության տակ գտնվող հաղորդիչները:
- Էկտրասարքերի խրիչները երբեք մի նորոգիր մեկուսիչ ժապավեններով, եթե դրանք կտրվել են, ավելի լավ է նորը դնել:
- Արդուկը մի՛ վերցրու թաց ձեռքերով և մի՛ արդուկիր հատակին ոտաբորիկ կանգնած:
- Արդուկի մեջ ջուր լցնելուց առաջ անպայման արդուկը անջատիր հոսանքից:
- Տաք արդուկի շուրջը մի՛ փաթաթիր լարը, որովհետև այն կարող է էլեկտրալարի մեկուսիչ մասերը վնասել և այրվելով՝ հրդեհ առաջացնել:

Արգելվում է.

- օգտագործել անսարք և ինքնաշեն էլեկտրասարքավորումներ և գազի սարքեր:
 - էլեկտրական լամպերը փաթաթել թղթով կամ շորով:
- Հիշեք. հոսանքահարվելիս անհրաժեշտ է անմիջապես անջատել հոսանքի աղբյուրը: Մի՛ դիպչիր հոսանքահարված մարդուն, քանի դեռ հոսանքը չես անջատել: Կիրառելով՝ հոսանքամեկուսիչ առարկաներ՝ հոսանքահարվածին հեռացրու հոսանքի աղբյուրից: Եթե տուժածի գիտակցությունը տեղն է, թող պառկած, ոտքերը բարձրացրու 30 սմ, կամ շրջիր կողքի՝ բարձրացրած գլխով և սրունքներով, ծածկոցով ծածկիր և բժիշկ կանչիր:



2010 թ. Աշխարհի առաջնությունից

Օրեր առաջ ֆուտբոլի 2010 թ. աշխարհի առաջնությունը եւս անցավ պատմության գիրկը, սակայն ինչպէս համարյա բոլոր բազմամարդ ու լայնածավալ միջազգային իրադարձությունները, այն եւս զերծ չմնաց արտակարգ պատահարներից:

Յուրաքանչյուրն իր ձեռով է պարտաստում

Անգլիայի եւ Միացյալ Նահանգների ֆուտբոլի հավաքականների հանդիպումը սպասարկող բրազիլացի մրցավարների բրիգադը խաղից առաջ անցել է անգլերեն հայտնաբերված ուսուցանող արագացված լեզվի դասընթաց: Այդ մասին որոշում է կայացվել նրանից հետո, երբ Անգլիայի հավաքականի առաջատար ֆուտբոլիստ Ուեյն Ռունիսին հարավաֆրիկյան «Պլատինիում Սթարս» ակումբի հետ ընկերական խաղում դեղին քարտ է ստանում՝ զգացմունքները ոչ պարկեշտ բառերով արտահայտելու համար: Դրանից հետո բրազիլացի մրցավարներին են հանձնում անգլերեն շուրջ երկու տասնյակ բառերից ու արտահայտություններից կազմված մի յուրօրինակ ցուցակ, որոնց խաղի ժամանակ «պետք է հատուկ ուշադրություն դարձնել», բնականաբար՝ դեղին քարտի տեսքով:

«Հաշվի առնելով շատ ֆուտբոլիստների խառնվածքն ու բռնկուն բնավորությունը եւ իմանալով, որ նրանց մեծ մասը սիրում է հայտնել՝ վստահ եմ, որ մի քանի մասնատիպ «թունը» արտահայտություն մենք խաղադաշտում հաստատ կլսենք», - ասել է մրցավար Ալբերտո Գոմեսը: «Մենք, իհարկե, չենք կարող միանգամից 10-15 լեզու իմանալ, բայց գոնե անգլերեն ամենատարածված հայտնաբերված պետք է իմանանք», - հավելել է Ալբերտոյի գործընկերը:

Ձյուն Աֆրիկայում

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունից առաջ Հարավաֆրիկյան Հանրապետության հյուսիսային հատվածում եղանակի ջերմաստիճանը կտրուկ իջնում է եւ ձյուն է գալիս: Տեղաբնակներն ու խաղերից առաջ Աֆրիկա ժամանած ֆուտբոլի երկրպագուները նետվում են խանութներ՝ տաք հագուստ, գլխարկներ ու ձեռնոցներ գնելու: Չնայած ՖԻՖԱ-ին դեռեւս 2008 թ. էին զգուշացրել, որ հնարավոր են եղանակի կտրուկ փոփոխություններ եւ, նույնիսկ քննարկվել էր առաջնության խաղերը հունիս-հուլիսից սեպտեմբեր տեղափոխելու տարբերակը: Սակայն ֆուտբոլի եվրոպական ակումբները դեմ էին դուրս եկել այդ որոշմանը՝ պատճառաբանելով, որ իրենք դրա համար ստիպված պետք է լինեն մեծ փոփոխությունների ենթարկել իրենց ազգային առաջնությունների խաղերի ժամանակացույցերը:

Տեղի բնակիչների խոսքերով՝ վերջին անգամ Յոհանեսբուրգում ձյուն էր եկել 2007 թվականին: Այդ ժամանակ քաղաքի բնակիչների համար ձյան տեղումներն իսկական աղետի էին վերածվել, քանի որ չնայած նրան, որ Հարավաֆրիկյան Հանրապետությունը համարվում է «Փոքրիկ եվրոպա» Աֆրիկայում, այնտեղ տարվա մեջ օդի միջին ջերմաստիճանը հազվադեպ է անցնում +15-ից, եւ չկա կենտրոնացված ջեռուցման համակարգ: Մայրաքաղաքի աղքատ թաղամասերում գրանցվել էին ցրտահարությունից մահվան դեպքեր:

Ղեկին քնած

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունից շատ առաջ մոլորակի տարբեր ծայրերից բազմաթիվ մարզասեր երկրպագուներ էին ժամանում Հարավային Աֆրիկա: Մարդկային այդպիսի խոշոր կուտակումների պարագայում դժբախտ պատահարներից խուսափելը չափազանց դժվար է: Հունիսի 10-ին վթարի է ենթարկվում Սվազիլենդից Նելսոն Ռեյթ զբոսաշրջիկների տեղափոխող ավտոբուսը: Պատահարի հետեւանքով մահանում է Մեծ Բրիտանիայի երկու քաղաքացի, եւս տասնութ՝ ստանում մարմնական տարբեր վնասվածքներ: Պատահարի հետ կապված շրջանառվող վարկածներից մեկի համաձայն՝ ավտոբուսի վարորդը դեկին քնել էր ու հետեւաբար՝ կորցրել մեքենայի կառավարումը: Դրա հետեւանքով ավտոբուսը դուրս էր եկել ճանապարհի երթուղուց ու շրջվել:

Պայթյուն՝ մարզադաշտի մոտ

Հունիսի 21-ին Հարավաֆրիկյան Հանրապետության մայրաքաղաք Յոհանեսբուրգի «Սոքեր



Սիթի» մարզադաշտի մոտ պայթյուն է տեղի ունենում: Այդ պահին այնտեղ մարզվում էր Բրազիլիայի հավաքականը: Սկզբում ենթադրում են, որ Քեյթիթաունում գտնվող լրատվական կենտրոնում ռումբ է պայթել: Շենքում գտնվող մարդկանց արագ տարհանում են: Որոնողական աշխատանքների արդյունքում հատուկ ծառայությունների աշխատակիցները որեւէ պայթուցիկ սարք չեն հայտնաբերում:

Քիչ ավելի ուշ ոստիկանությունը պարզում է, որ պայթյունն արդյունաբերական բնույթի էր ու տեղի էր ունեցել «Սոքեր Սիթի» մարզադաշտից մոտ 500 մետր հեռավորության վրա գտնվող արտադրական օբյեկտում:

Ահաբեկության կամ Բրազիլիայի հավաքականի ֆուտբոլիստների մարզումները խանգարելու վարկածներն իրավապահները հերքում են:

Ողբերգություն Մենեգալում

Հունիսի 26-ին Մենեգալի մայրաքաղաք Դաբարից 670 կմ հեռավորության վրա գտնվող Մաթան քաղաքում տեղի ունեցած փլուզման պատճառով ֆուտբոլի 11 երկրպագու է մահանում:

Չնայած Մենեգալի հավաքականը դուրս էր մնացել 2010 թ. աշխարհի առաջնության ընտրապայքարից՝ այս մարզածեւն այնտեղ մեծ մասայականություն է վայելում, եւ սենեգալցիները շատ ուշադիր ու մեծ ոգեւորությամբ հետեւում էին ֆուտբոլային այդ տոնին:

Այդ օրը մարզասերները փողոցում հավաքվել էին միասին դիտելու Ուրուգվայի ու Հարավային Կորեայի հավաքականների խաղը: Քանի որ սենեգալցիներից շատերն ստանում էին հեռուստացույց չկա, նման բացօթյա, խմբակային դիտումներն այնտեղ հազվագյուտ երեւոյթ չեն: Փողոցի ասֆալտը չի դիմանում երկրպագուների այդպիսի քանակության ծանրությանն ու փլվում է, ինչի հետեւանքով 11 մարդ է զոհվում:

Պապահար հյուրանոցում

Հունիսի 22-ին Հարավաֆրիկյան Հանրապետության Դուրբան քաղաքի հյուրանոցում, որտեղ ժամանակավորապես բնակություն էր հաստատել ֆուտբոլի իսպանիայի հավաքականը, փուլ է գալիս սենյակներից մեկի առաստաղը: Բարեբախտաբար, այդ պահին իսպանացի ֆուտբոլիստները գտնվում էին ոչ թե իրենց սենյակներում, այլ մարզադաշտում անցկացնում էին հերթական պարապմունքը:

Տեղական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ առաստաղի փլուզման պատճառ է դարձել ջրատար խողովակներից մեկի պայթյունը: Առաստաղը չի դիմացել կուտակված ջրի ծանրությանը եւ փլվել է:

Կոպրվածք՝ խաղի ժամանակ

Հունիսի 18-ին կայացած ֆուտբոլի աշխարհի առաջնության Միացյալ Նահանգներ-Ալբանիա հանդիպման ընթացքում Սլովենիայի հավաքականի հարձակվող Նեյջ Պեչնիկը կտրուկ է աչ սրունքը:

Ամերիկացիների հետ հանդիպմանը Պեչնիկը խաղադաշտ է դուրս գալիս 73-րդ րոպեին՝ փոխարինելով Չլատան Լյուբիյանկիչին: Վնասվածքը Նեյջը ստանում է ամերիկացի Քլինթ Դենսի-



սիի հետ բախման հետեւանքով: Իսկ այն, որ նրա վնասվածքը բավական լուրջ է եւ Պեչնիկն այլեւս չի կարող հանդես գալ առաջնության խաղերում, հայտնի է դառնում մի քանի օր անց:

Փորձություն՝ Նյարդերի համար

Հարավային Աֆրիկայում անցկացվող ֆուտբոլի առաջնության ամենամեծ «դժբախտություններից» մեկը վուլվուզել կոչվող ազգային երաժշտական գործիքն էր: Գրեթե ողջ աշխարհի երկրպագուները ստիպված էին առաջնության խաղերի ժամանակ, համուն ֆուտբոլի, հանդուրժել այդ գործիքի՝ իր անվանման ականջ ծակող, տհաճ ու երբեւէ չլռող ձայնը: Չափումները ցույց են տվել, որ դրանց արձակած ձայնը գերազանցում է թե՛ ֆուտբոլային շատ երկրպագուների նախընտրած թմբուկների, եւ թե՛ մրցավարի սուլիչի ձայնի բարձրությունը: Իմիջիայլոց, վուլվուզելների աղմուկից դժգոհում էին ոչ միայն մարզասերները, այլեւ՝ խաղադաշտում հանդես եկող ֆուտբոլիստները:

Անհաջող փորձ արվեց արգելել վուլվուզելներով մուտքը մարզադաշտեր: Այդ երաժշտական գործիքն արտադրող ընկերությունը խոստացավ զգալի չափով իջեցնել նոր արտադրվող գործիքների ձայնի հզորությունը, սակայն նույնիսկ դրանից հետո դեղատնտեսները նյարդերը հանգստացնող հաբերի վաճառքը դուրս-ինչ չի նվազում...

Գերմանիայից ժամանած մի մարզասեր վուլվուզելի մեկ այլ կիրառություն է գտնում: Գերմանիա-Գանա խաղից հետո հայրենի թիմի հաղթանակը չափազանց բուռն կերպով նշող եւ ոչ սթափ վիճակում գտնվող գերմանացի վուլվուզելով ծեծում է իրեն կարգի հրավիրել փորձող ոստիկանին, ինչից հետո արթնանում է ոստիկանության ժամանակավոր մեկուսարանում:

Վուլվուզելը տարածվում է աշխարհով մեկ

Ռուսաստանից անանուն երկրպագուն ավստրիացի ոսկերչին պատվիրել է վուլվուզել՝ 17 հազար եվրո արժողությամբ:

Վուլվուզելի այս մոդելը զարդարված է սպիտակ ոսկով եւ աղամանդներով: Բացառիկ երաժշտական գործիքը որպես

նվեր մատուցվել է բիզնես-գործընկերոջը՝ Աշխարհի գավաթի՝ հուլիսի 11-ի եզրափակիչ խաղի ժամանակ: Վաճառված վուլվուզելի յուրօրինակ արժեքը տարբերվում է սովորականից գրեթե 3000 անգամ:

Նշենք նաեւ, որ վուլվուզելան Հարավային Աֆրիկայում ֆուտբոլի աշխարհի գավաթի խաղերի խորհրդանիշն է դարձել: «Դա մեր պատմության մի մասն է: Դրանք ծագում են եղջյուրներից, որոնցով դեռեւս մեր նախնիները իրար էին կանչում: Հիմա դա երկրպագուների համար արտահայտման ձեւ է արդեն», - ասել է Հարավային Աֆրիկայի Աշխարհի գավաթի կազմկոմիտեի ներկայացուցիչ Բիլ Սկոնդոն:

Հաղթանակը Նշելիս

Ֆուտբոլի աշխարհի առաջնությունում Հարավային Կորեայի հավաքականի՝ 1/8 եզրափակիչ դուրս գալուց հետո մի քանի երիտասարդ որոշում են յուրահատուկ կերպով նշել իրենց թիմի հաղթանակը: Նրանք, չգիտես ինչու, որոշում են երեքով ցատկել Սեուլի միջով հոսող Հան գետը: Նրանցից երկուսը կարողանում են գետից դուրս լողալ, իսկ երրորդը ջրահեղձ է լինում ու իրվանդանոցի ճանապարհին մահանում:

Գլուխդ պատին ես տվել

Այն, որ սերը ֆուտբոլի նկատմամբ կարող է հասցնել մահվան, ցավոք արդեն նորություն չէ: Հարավաֆրիկյան Հանրապետությունում բնակվող Դեյվիդ Մաքրոնեյին սպանում են... սեփական ընտանիքի անդամները: Միայն նրա համար, որ Դեյվիդը չէր ցանկացել փոխել հեռուստացույցի ալիքը: Այդ օրը եթեր էր հեռարձակվում Գերմանիայի ու Ավստրալիայի հավաքականների հանդիպումը, իսկ նրա կինը, որդին ու դուստրը նույն ժամին ուզում էին դիտել իրենց սիրելի կրոնական հաղորդումը:

Ինչպես գրված է ոստիկանության տարածած հաղորդագրության մեջ՝ Դեյվիդի մերժումից հետո ընտանիքի մյուս անդամները (նշենք, որ «ընտանիք» բառն այստեղ մեծ վերաբանություններով է օգտագործված) հարձակվում է նրա վրա եւ բռնելով՝ զուլսը մի քանի անգամ ուժեղ հարվածում պատին: Այստեղ են ասել. «Գլուխդ պատին ես տվել»...

Գոհար Բաղդասարյան

